

«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հ ՈՒ Լ Ի Մ

2021 թ.

30.07.2021

Վարդենիսից հենց նոր տեղեկացա, որ ՀՀ ԶՈւ ՀՕՊ-ը քիչ առաջ ոչնչացրեց թշնամու արդեն 2-րդ ԱԹՄ-ն, դեռ կա 3-րդը. Արսեն Բաբայան

Վարդենիսից հենց նոր տեղեկացա, որ ՀՀ ԶՈւ ՀՕՊ-ը քիչ առաջ ոչնչացրեց թշնամու արդեն 2-րդ ԱԹՄ-ն: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է «Հայրենիք» կուսակցության անդամ Արսեն Բաբայանը:

«Վարդենիսից հենց նոր տեղեկացա, որ ՀՀ ԶՈւ ՀՕՊ-ը քիչ առաջ ոչնչացրեց թշնամու արդեն 2-րդ ԱԹՄ-ն: Դեռ կա 3-րդը, որը փորձում է շարքից հանել այդ հատվածում մեր ՀՕՊ համակարգը»:

Ավելի վաղ Վարդենիսի քաղաքապետը հայտնել էր, որ ուժեղ ձայն է լսել եւ կարծում է, որ անօդաչու է խոցվել:

<https://lurer.com/?p=428324&l=am>

30.07.2021

Ճանապարհային ոստիկանները վաղը Սևանում իրականացնելու են «Ցոան Վերգո» անվանումը կրող հատուկ օպերացիա

Վաղը հուլիսի 31-ին, ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 4-րդ վաշտի 1-ին դասակի հրամանատար Վաչագան Ոսկանյանի գլխավորությամբ Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում իրականացվելու է հատուկ օպերացիա, որը կրելու է «Ցոան Վերգո» անվանումը: Ինչպես հայտնում է SHAMSHYAN.com-ը, ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեռ ամառվա սկզբից ՃՈ 2-րդ սպայական գումարտակի հրամանատար Արսեն Մարդոյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Հայկ Դավթյանի, 2-րդ սպայական գումարտակի 4-րդ վաշտի հրամանատար Էդգար Սուսլիյանի գլխավորությամբ Սևանի տարածաշրջանում իրականացվել է «Ձեզ տանը սպասողներ կան» օպերացիան, ինչի արդյունքում կանխվել են մեծ թվով ճանապարհատրանսպորտային պատահարներ, քանի որ ճանապարհային ոստիկանները հայտնաբերել են մեծ թվով ոչ սթափ վիճակում վարորդների, ովքեր ենթարկվել են վարչական պատասխաստվության, ավտոմեքենաներն էլ տեղափոխվել են ՃՈ պահպանվող հատուկ տարածք:

Ճանապարհային ոստիկանները այդ օրերին նաև մեծ թվով վարորդների են ուղեկցել Սևանից դեպքի Կոտայքի մարզ, որտեղից էլ վարորդներին Կոտայքի մարզից անվտանգ ուղեկցել են մինչև մայրաքաղաք:

Կայքի տեղեկություններով՝ վաղվա օպերացիայի անունը «Ցոան Վերգո» է դրվել, քանի որ դասակի հրամանատար Վ. Ոսկանյանը դեռ դպրոցական տարիներից շատ է սիրել ընթերցել «Մասնա ծոեր» էպոսը և միշտ ծանր է տարել Ցոան Վերգոյի կերպարը, ասելով՝ եթե Ցոան Վերգոն չլիներ, Դավիթը Թուր Կեծակին միշտ կօգտագործեր մեր թշնամիների դեմ:

<https://news.am/arm/news/656152.html>

29.07.2021

Գնել Սանույանն ինձ հետ անձնական խնդիրներ ունի քաղաքական հայացքների պատճառով. Հակոբ Ավետյան

Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանույանն ինձ հետ անձնական խնդիրներ ունի քաղաքական տարակարծությունների պատճառով: Այս մասին այսօր՝ հուլիսի 29-ին, [NEWS.am](https://news.am)-ի հետ զրույցում ասաց Գեղամասարի համայնքապետ Հակոբ Ավետյանը՝ անդրադառնալով մարզպետի այսօր հնչեցրած հայտարարությանը, թե Հակոբ Ավետյանի անունը կապված է բազմաթիվ քրեական գործերի հետ:

«Գնել Սանույանն ինձ հետ ունի անձնական խնդիրներ քաղաքական հայացքների տարբերության պատճառով և դրա համար էլ նման հայտարարություններ է անում: Ես ընտրությունների ժամանակ եղել եմ «Հայաստան» դաշինքի նախընտրական շտաբի ղեկավարը, աջակցել եմ այդ ուժին՝ թեպետ իմ համայնքում հաղթել է իշխող ուժը: Նա սուտ է խոսում: Ինձ անցյալ տարի ձերբակալեցին առանց որևէ հիմքի, հիմա էլ նույնը բանը շարունակում են: Թող հիմնավորի, թե որոնք են այդ բազմաթիվ քրեական գործերը: Ինձ մեկ մեղադրանք է առաջադրված, որում վստահ եմ՝ դատավորն ինձ լիարժեք արդարացնելու է», - նշեց նա:

Հարցին, թե քաղաքական դիրքորոշումների վերաբերյալ երբևէ զրույց ունեցել է Գնել Սանույանի հետ, Հակոբ Ավետյանը դրական պատասխանեց:

«Շատ կարճ զրույց ենք ունեցել: Ես հարկ չեմ համարել այդ թեմայով իր հետ երկար խոսել: Ես միշտ հավատարիմ եմ իմ դիրքորոշմանը», - ասաց Հակոբ Ավետյանը:

Համայնքապետի խոսքով՝ ընտրություններից մի քանի օր անց Գեղարքունիքի մարզպետը պահանջել է իր հրաժարականը, սակայն մերժում է ստացել. «Դրանից հետո չենք զրույցել»:

Անդրադառնալով Սանույանի հարցադրմանը, թե նորմա՞լ է արդյոք, որ սահմանային միջադեպերի ժամանակ Գեղամասարի համայնքապետը Երևանում էր, Ավետյանն արձագանքեց, որ բանկի հետ անհետաձգելի հարց ուներ:

«Մի քանի օր առաջ եկել էին ինձ մոտ և ասում, որ տունս և մեքենաս վաճառքի են հանում: Ես գնացել էի այդ հարցերը կարգավորելու, որ սահմանի վրա ես անտուն չմնամ: Գնացել էի կարճ ժամանակով, բայց ինձ բերման ենթարկեցին ԱԱԾ: Հիմա արդեն Գեղամասարում եմ», - ամփոփեց Հակոբ Ավետյանը:

<https://news.am/arm/news/655975.html>

29.07.2021

ՊՆ. Ժամը 07:00-ի դրությամբ իրադրությունը հանգիստ է, կրակոցներ չկան

Պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ հուլիսի 29-ին, ժամը 03:00-ի սահմաններում, հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում, Քարվաճառի ուղղությամբ, ադրբեջանական ՋՈՒ ստորաբաժանումները, խախտելով նախորդ օրը ձեռք բերված՝ կրակի դադարեցման վերաբերյալ պայմանավորվածությունը, կրկին դիմել են սադրանքի՝ հրաձգային զինատեսակներից կրակ բացելով հայկական դիրքերի ուղղությամբ:

Հայկական կողմի պատասխան գործողություններից հետո կրակը լռեցվել է: Ժամը 07:00-ի դրությամբ իրադրությունը հանգիստ է, կրակոցներ չկան:

<https://hetq.am/hy/article/133882>

29.07.2021

Քրեական գործերով անցնող Ձուլաքարի գյուղապետն ազատվել է պաշտոնից

Գեղարքունիքի մարզի Ձուլաքար գյուղի 19 տարվա համայնքապետ Արման Ղազարյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի [որոշմամբ](#)՝ Ձուլաքար համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել նույն գյուղի բնակիչ Մխիթար Ավետիքի Մկրտչյանը: Մարզպետը հուլիսի 27-ին այդպիսի որոշում է կայացրել, քանի որ լրացել էր Արման Ղազարյանի պաշտոնավարման հերթական ժամկետը: Արման Ղազարյանը Ձուլաքար համայնքը ղեկավարում է 2002-ից:

Ձուլաքարի արդեն նախկին համայնքապետ Արման Ղազարյանի գործունեությանը «Հետք»-ը մի քանի անգամ անդրադարձել է: Նրա պաշտոնավարման ժամանակ [սպամոնտաժվել և յուրացվել էր](#) համայնքի հողերը ոռոգելու համար խորհրդային տարիներին կառուցված 1.8 կմ երկարությամբ ջրագիծը: Բացի այդ, Արման Ղազարյանի և համայնքի ավագանու որոշումներով Ձուլաքարի մակապարտեզի հողատարածքի մի մասն [օտարվել էր նրա եղբորը](#), որն էլ նույն հողը վարձակալության էր տրամադրել հեռահաղորդակցության օպերատորին: Այս գործարքի հետևանքով համայնքը զրկվել էր լրացուցիչ եկամտից: Երրորդ դրվագով Արման Ղազարյանը համայնքապետարանի հաստիքացուցակում ներառել էր անձանց, որոնք աշխատանքի չէին հաճախել, գտնվել էին ՀՀ-ից դուրս, բայց վարձատրվել էին:

Մեր հրապարակումների հիման վրա քրեական գործեր էին [հարուցվել](#), որոնք նախաքննության փուլում են:

Բացի այդ, մինչ օրս Գեղարքունիքի մարզպետարանին չի հաջողվում ստանալ և հրապարակել Ձուլաքար համայնքի ղեկավարի և ավագանու որոշումները:

<https://hetq.am/hy/article/133891>

29.07.2021

Գեղարքունիքի հատվածում փոխհրաձգություն է ծավալվել, հայկական կողմը մեկ վիրավոր ունի. ՊՆ

Հուլիսի 29-ին, ժամը 08:40-ի սահմաններում, Ադրբեջանի ՁՌԻ ստորաբաժանումները կրկին կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, հայտնում է ՊՆ մամուլի ծառայությունը:

Ծավալվել է կարճատև փոխհրաձգություն, հայ դիրքապահների գործողություններից հետո հակառակորդի կրակը լռեցվել է:

Հուլիսի 29-ի սադրանքների հետևանքով հրազենային վիրավորում է ստացել ՀՀ ՁՌԻ մեկ զինծառայող:

Ժամը 09:30-ի դրությամբ իրադրությունը հանգիստ է:

<https://news.am/arm/news/655824.html>

28.07.2021

Այսօր գոհված սպա Հայկ Գևորգյանը ևս մասնակցել էր 44-օրյա պատերազմին

Այսօր ադրբեջանական հարձակման հետևանքով գոհվել է նաև ավագ լեյտենանտ Հայկ Գևորգյանը: Նա երկու անչափահաս տղաների հայր էր: Գևորգյանը ծնվել էր 1983 թվականին Գեղարքունիք մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում: Նա ընտանիքի միակ որդին էր, ուներ իրենից կրտսեր քույր:

Պարտադիր զինվորական ծառայությունն ավարտելուց հետո ավագ լեյտենանտ Հայկ Գևորգյանը շարունակել էր իր ծառայությունն արդեն որպես սպա: Նա մասնակցել է 44-օրյա պատերազմին Քարվաճառում:

Հիշեցնենք, որ հուլիսի 28-ին, ժամը 03:40-ի սահմաններում, ադրբեջանական ՋՈւ ստորաբաժանումները հերթական անգամ դիմել են սադրանքի եւ խախտել հրադադարը հայ-ադրբեջանական սահմանի հյուսիսարևելյան հատվածում: Ըստ ՊՆ-ի հաղորդագրության՝ ընթացել են տեղային մարտեր: Ժամը 08:30-ի դրությամբ հայկական կողմն ուներ երեք գոհ եւ 4 վիրավոր:

Ավելի ուշ ՊՆ-ից հայտնեցին, որ ՌԴ խաղաղապահ զորքերի հրամանատարության միջնորդությամբ ձեռք է բերվել պայմանավորվածություն հյուսիսարևելյան ուղղությամբ հայ-ադրբեջանական զորքերի շփման գծում հրադադարի ռեժիմը վերականգնելու վերաբերյալ:

<http://yerkir.am/news/view/245366.html>

28.07.2021

Հայկական կողմի վիրավորների թիվը հինգ է. Քննչական կոմիտե

2021թ. հուլիսի 28-ին՝ ժամը 03:30-ից 03:50-ի սահմաններում, ՀՀ տարածքային ամբողջականությունը խախտելու դիտավորությամբ, ՀՀ տարածքի մասն առանձնացնելու և զավթելու նպատակով, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի մի խումբ զինծառայողներ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Գեղամասար համայնքների վարչական տարածքներում գտնվող Վերին Շորժա և Սոթք բնակավայրերի սահմանային հատվածում, բռնություն են գործադրել պահպանություն իրականացնող ՀՀ ՋՈՒ զինծառայողների նկատմամբ, որի ընթացքում երկու կամ ավելի անձանց սպանելու դիտավորությամբ, ազգային, ռասսայական կամ կրոնական աստեղծության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, հրետանային և հրաձգային միջոցներից կրակ են արձակել ՀՀ ՋՈՒ զինծառայողների ուղղությամբ, գրավել են պահպանվող հենակետերից մեկը, որի հետևանքով ՀՀ ՊՆ N գորամասի զինծառայող, ավագ լեյտենանտ Հայկ Հովհաննեսի Գևորգյանը, պարտադիր ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Դավիթ Գառնիկի Քոչարյանը և Կորյուն Արայիկի Հարությունյանը ստացած հրազենային և բեկորային մարմնական վնասվածքներից մահացել են, իսկ պարտադիր ժամկետային հինգ զինծառայողներ, շարքայիններ ստացել են տարբեր աստիճանի հրազենային, բեկորային մարմնական վնասվածքներ:

ՀՀ քննչական կոմիտեից հայտնում են, որ դեպքի առթիվ Սևանի կայազորի զինվորական դատախազությունում ՀՀ քրեական 300.2-րդ հոդվածով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով հարուցված քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնի վարույթ և ձեռնարկվում է նախաքննություն:

<http://yerkir.am/news/view/245369.html>

28.07.2021

Անհայտ կորած զինծառայողը հայտնաբերվել է. ծայրահեղ ծանր վիճակում է. Գեղարքունիքի մարզպետ

Անհայտ կորած ժամկետային զինծառայողը հայտնաբերվել է, նա վիրավոր է, վիճակը ծայրահեղ ծանր է, հայտնել է Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը:

«Բժիշկները նրա կյանքի համար պայքարում են», - ասել է մարզպետը:

Ադրբեջանական ՁՈւ ստորաբաժանումները հուլիսի 28-ին՝ ժամը 03:40-ի սահմաններում, հերթական անգամ դիմել են սադրանքի և խախտել հրադադարը հայ-ադրբեջանական սահմանի հյուսիսարևելյան հատվածում, ընթացել են տեղային մարտեր: Մարտական գործողությունների հետևանքով, ժամը 08:30-ի դրությամբ, հայկական կողմն ունի երեք զոհ, ևս երեք զինծառայող վիրավոր են:

Հայկական դիրքերի ուղղությամբ հարձակում նախաձեռնած ադրբեջանական ստորաբաժանումները ժամը 09:20-ի դրությամբ, տալով կորուստներ, հետ են շարտվել իրենց ելման դիրքեր: Ռուսական կողմի միջնորդությամբ կողմերը հրադադարի պայմանավորվածություն են ձեռք բերել:

<http://yerkir.am/news/view/245344.html>

28.07.2021

Գեղարքունիքում թշնամին դրսից է գնդակահարում, դավաճանների խումբը՝ ներսից. փաստաբանը՝ Ձուլաքարի իրադրության մասին

Ձուգահեռ երկու իրականություն. Միեր Սահակյանի հետ Գեղարքունիքի մարզում ենք, ուր հերթական քաղաքական իրավախայտառակությունն է: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է փաստաբան Վահե Եփրիկյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Ձուլաքար համայնքի ղեկավարի լիազորություններն ավարտվել են, և մարզպետը նշանակել է համայնքի ղեկավարի ժ/պ, ում մարզպետարանի աշխատակիցներն այսօր ներկայացնում են աշխատանքի: Չանդրադառնալով մարզպետի որոշման իրավաչափությանը՝ թերևս նշեմ, որ սույն նշանակումն ի սկզբանե տեղի է ունենում օրենքի հետևյալ կոպտագույն խախտումներով՝ համայնքի անդամներին, այդ թվում՝ ավագանիներին թե՛ երեկ, թե՛ այսօր ոստիկանությունը բերման է ենթարկել:

Նման իրավիճակում անհասկանալի է՝ մարզպետարանի աշխատակիցները համայնքի ղեկավարի ժ/պ-ին ու՞մ էին ներկայացնում:

Ավելին՝ դեռ երեկ համայնքի ղեկավարի աշխատասենյակը կապարակնքվել էր, ինչի մասին առկա է նաև նշում մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի այսօր կազմած արձանագրության մեջ, ով, սակայն որևէ կերպ չի անդրադարձել հանգամանքին, թե ո՞վ է երեկ կապարակնքել դռներն, ի՞նչ նպատակով և արդյո՞ք ուներ նման իրավասություն: Մինչդեռ նշեմ՝ կապարակնքումը տեղի է ունեցել երեկ ըստ մարզպետարանի աշխատակիցների բանավոր հայտարարության՝ համայնքապետի ժ/պ-ի կողմից:

Մտացվում է՝ մարզպետի, մարզպետարանի աշխատակիցների բացահայտ ապօրինություններով, այդ ամենի ոստիկանական հովանավորչությամբ՝ նշանակումներ են կատարվում, դրանք կյանքի կոչվում: Այս ամենը գուցե տարօրինակ լիներ, եթե չլիներ արդեն սովորական դարձած քաղաքական նպատակահարմարության խնդիրն, այն է՝ Զուլաքար համայնքի նախկին ղեկավարն, ով ի դեպ այժմ գտնվում է Առաջին համալսարանական հիվանդանոցում և պատշաճ չի ծանուցվել վերոհիշյալի մասին, նաև «Հայաստան» դաշինքի համախոհ է, իսկ նորանշանակ ժ/պ-ն հավանաբար իշխանահաճո ինչ-որ մեկը:

Այսպիսով՝ ՏԻՄ ընտրությունների նախաշեմին ամբողջապես հասկանալի են դառնում քաղաքական հետապնդումների այս խայտառակ շարքի պատճառներն ու նպատակները:

Իսկ Գեղարքունիքի մարզում այսօր վերստին թուրքը կրակում է, բնականաբար, դավաճանների խումբն էլ ոստիկանության բաժիններն է լցնում իր հող ու ջրին կապված ամենքին, գլխատում հատկապես սահմանամերձ շրջանները. թուրքի առջև ճամփա է բացում էլի:

Երկու գուգահեռ իրականություն՝ թշնամին դրսից է գնդակահարում, դավաճանների խումբը՝ ներսից:

Ահա սրանց ապագան՝ ապագայի գոհերն, ապագա կորուստներն ու ապագա քաղբանտարկյալները, մի խոսքով՝ ստրկացած ու թշվառ ապագան, ուրեմն աքսիոմ է այլևս՝ ապագա կա, եթե սրանք չկան»:

<http://yerkir.am/news/view/245348.html>

28.07.2021

Ադրբեջանական զինծառայողները թիրախավորել են Գեղարքունիքի գյուղերը. ՄԻՊ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գնահատմամբ՝ այս պայմաններում ադրբեջանական իշխանությունները կրում են այսօրվա կրակոցներով բնակիչների իրավունքների խախտումների, ՀՀ 3 զինծառայողների սպանությամբ նրանց իրավունքները խախտելու և վիրավորում ստացածների առողջությանը հասցված վնասի համար: Այս մասին հայտարարություն է տարածել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

«Այսօր Գեղարքունիքում վիրավորում ստացած զինծառայողները հոսպիտալում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին հաստատել են, որ իրենք կանխում են ադրբեջանական զինված ուժերի կողմից ՀՀ գյուղերի ուղղությամբ արձակվող կրակոցները և կատարում են ՀՀ քաղաքացիական բնակչության անմիջական պաշտպանության գործառույթ:

Մասնավորապես, այսօր՝ 2021 թվականի հուլիսի 28-ին Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են զինվորական հոսպիտալ և տեսակցել Գեղարքունիքի մարզի Սոթքից մինչև Վերին Շորժա գյուղերի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի հրահրած կրակոցներից վիրավորում ստացած զինծառայողներին:

Այցի ընթացքում տեղի են ունեցել առանձնազրույցներ: Զինծառայողները տեղեկացրել են, որ ադրբեջանական զինված ուժերը վերջին օրերքին կրակոցներ են արձակում հայկական դիրքերի և մոտակա գյուղերի ուղղությամբ: Զինծառայողները հայտնել են նաև, որ հուլիսի 28-ին՝ ժամը 03:40-04:00-ի սահմաններում, ադրբեջանական կողմի կրակոցներն ավելի ինտենսիվ են դարձել:

Ընդ որում, ադրբեջանական զինծառայողները կիրառել են տարբեր տրամաչափի զինատեսակներ, այդ թվում՝ ականանետներ, դիպուկահար հրացաններ, գնդացիրներ և այլն:

Ադրբեջանական զինծառայողները թիրախավորել են հայկական դիրքերի հարևանությամբ գտնվող քաղաքացիական բնակավայրերը՝ Գեղարքունիքի գյուղերը, որոնց պաշտպանության արդյունքում էլ հայ զինծառայողները ստացել են տարբեր վիրավորումներ:

Այցի ընթացքում ուսումնասիրվել են վիրավորում ստացած զինծառայողների բժշկական փաստաթղթերը, նրանց առողջական վիճակը քննարկվել է հոսպիտալի բուժանձնակազմի հետ: Զինծառայողները ստացել են տարբեր վիրավորումներ (ուսահողի, դեմքի, ազդրի և այլն), չորս զինծառայողներից մեկի վիճակը բժիշկները գնահատել են թեթև ծանրության, երկուսինը՝ միջին, մյուսինը՝ ծանր:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ամփոփվում են հավաքագրված տեղեկությունները: Զինծառայողների առողջական վիճակը Պաշտպանի աշխատակազմի անմիջական ուշադրության ներքո է:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ նշում է, որ ադրբեջանական զինված ուժերի ծառայողների կրակոցներն արձակվում են ՀՀ գյուղերի անմիջական հարևանությամբ, այդ թվում՝ գյուղերի ուղղությամբ: Փաստերը հաստատում են, որ ադրբեջանական կրակոցներն ամեն անգամ հնարավոր է լինում կանխել միայն ՀՀ զինված ուժերի պատասխան կրակոցների շնորհիվ, ովքեր պաշտպանում են մեր բնակիչների իրավունքները, կյանքն ու խաղաղությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գնահատմամբ՝ այս պայմաններում ադրբեջանական իշխանությունները կրում են այսօրվա կրակոցներով բնակիչների իրավունքների խախտումների, ՀՀ 3 զինծառայողների սպանությամբ նրանց իրավունքները խախտելու և վիրավորում ստացածների առողջությանը հասցված վնասի համար»:

<https://news.am/arm/news/655798.html>

28.07.2021

Ժամը 18:00-ի դրությամբ իրադրությունը հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում կայուն է. ՊՆ

Հուլիսի 28-ի ժամը 18:00-ի դրությամբ իրադրությունը հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում կայուն է, կրակի դադարեցման մասին պայմանավորվածությունը հիմնականում կատարվում է: Այս մասին [NEWS.am](https://news.am)-ը տեղեկանում է Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքից:

Հայ-ադրբեջանական սահմանի մնացած հատվածներում միջադեպեր չեն գրանցվել, ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները լիարժեք վերահսկում են օպերատիվ իրադրությունը», – ասվում է հաղորդագրության մեջ:

<https://news.am/arm/news/655779.html>

28.07.2021

Այս պահին Վարդենիսում եմ, կրակոցների ինտենսիվությունը պակասում է. ի՞նչ պայմաններով է հաստատվել հրադադարը. պատգամավոր

Կայքերում տեղեկություն կա, որ Ադրբեջանը հայտարարել է, թե համաձայնել է ռուսական կողմի՝ հրադադար հաստատելու վերաբերյալ նախաձեռնությանը (այսօր 10,00-ի դրությամբ): Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Այս պահին Վարդենիսում եմ, կարծես թե կրակոցների ու տեխնիկայի ձայների ինտենսիվությունը պակասում է:

Բայց հիմա շատ կարևոր է, թե հրադադարն ինչ պայմաններով է հաստատվում... Ինչի՞, ի՞նչ խոստման դիմաց...

Պի՛նդ պիտի լինենք սիրելի ժողովուրդ»:

Նույն թեմայի վերաբերյալ գրառում է արել նաև «Պատիվ ունեմ» դաշինքից պատգամավոր ընտրված Տիգրան Աբրահամյանը՝ մասնավորապես, նշելով. «Ադրբեջանը հայտարարել է, որ համաձայնվել է ռուսական կողմի՝ հրադադար հաստատելու վերաբերյալ նախաձեռնությանը (10,00-ի դրությամբ):

Եթե կա նման նախաձեռնություն, ապա հաստատելուց բացի պետք է ներկայացվի դրա պայմանները»:

Նշենք, որ արդեն Հայաստանի ՊՆ-ն հաստատել է, որ ՌԴ խաղաղապահ զորքերի հրամանատարության միջնորդությամբ ձեռք է բերվել պայմանավորվածություն հյուսիս-արևելյան ուղղությամբ հայ-ադրբեջանական զորքերի շփման գծում հրադադարի ռեժիմը վերականգնելու վերաբերյալ:

<https://news.am/arm/news/655670.html>

28.07.2021

3 զոհ, 3 վիրավոր, նաև մեկ անհետ կորած ունենք. Գնել Սանոսյան

«Գիշերվանից սկսվել են հակառակորդի կողմից գործողություններ, որի արդյունքում ունենք 3 զոհ, 3 վիրավոր, վիրավորների վիճակը նորմալ է կյանքին վտանգ չի սպառնում», – «Ազատության»-ը փոխանցեց Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը՝ հայտելով նաև մեկ անհետ կորածի մասին:

«Նաև մեկ անհետ կորած ունենք, այս պահին դեռ ինֆորմացիա չկա: Իրավիճակը շարունակում է լարված մնալ Սոթքից դեպի լճեր, Վերին Շորժայի ուղղությամբ՝ այդ ամբողջ հատվածում: Նոր բնագիծը, որ ունենք պատերազմից հետո, գրեթե ամբողջ նոր բնագծով կրակում են»:

Հարցին, թե ադրբեջանական զորքերի կողմից տեղաշարժ եղե՞լ է, Սանոսյանը պատասխանեց. – «Փորձեր եղել են, բայց մեր զինված ուժերը, իհարկե, կանխում են այդ փորձերը: Մեր զինված ուժերը բավական բարձր մակարդակով դիմակայում են հակառակորդի գրոհներին և հարձակումներին»:

Սանոսյանի խոսքով՝ խոշոր տրամաչափի զինատեսակներից կրակ դեռ չի արձակվել, կրակը բնակավայրեր չի հասել: «Բայց երբեմն անկանոն կրակներ են վարում, որը նաև բնակավայրերի

ուղղությամբ է լինում: Իհարկե անհանգստություն կա, ըստ իրավիճակի քայլերը կհասկանանք, ՊՆ-ի, բանակային կորպուսի հետ աշխատում ենք, կհասկանանք հետագա քայլերը», – ասաց մարզպետը՝ նշելով՝ խուճապ չկա:

<http://politik.am/am/3-zoh-3-viravor-naev-mek-anhet-korats-uneng-gnel-sanosyan>

28.07.2021

Հրատապ տարհանվել է Սոթքի ոսկու հանքավայրի 150 աշխատակից. ՀՀ ՄԻՊ

Ադրբեջանական այսօրվա կրակոցների պատճառով դարձյալ խաթարվել է Սոթքի ոսկու հանքավայրի աշխատանքը, խախտվել են աշխատողների իրավունքները: Այս մասին ահազանգում է ՀՀ ՄԻՊ-ը:

«Հրատապ տարհանվել է գիշերային հերթապահություն իրականացնող 150 աշխատակից:

Այս փաստը ստուգվել և հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման կողմից», - ասվում է հաղորդագրությունում:

<http://yerkir.am/news/view/245334.html>

26.07.2021

Ադրբեջանի կրակոցների պատճառով Սոթքի հանքավայրի աշխատանքը դադարեցվել է, տարհանել են աշխատակիցներին. ՄԻՊ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն այսօր վաղ առավոտյան քաղաքացիական բնակիչներից ահազանգեր է ստացել, որ ադրբեջանական զինված ուժերը կրակոցներ են արձակում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի Սոթք գյուղի հարևանությամբ, այս մասին հայտարարությամբ է հանդես եկել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

«Պարզվել է, որ կրակոցներն արձակվել են Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքում գտնվող Սոթքի լեռնանցքի հողմակների տարածքում տեղակայված ադրբեջանական զինված ուժերի դիրքերից և ընդհատումներով շարունակվել են տևական ժամանակ:

Կրակոցները եղել են տարբեր տրամաչափի զինատեսակներից, հայկական զինված ուժերի դիրքերից բացի արձակվել են Սոթքի հանքավայրի ուղղությամբ: Կրակոցները պարզ լսելի են եղել նաև Սոթք գյուղում և Գեղամասար համայնքի այլ մասերում: Ահազանգեր են ստացվել նաև այն մասին, որ ադրբեջանական զինված ուժերի կրակոցների, նրանց հրահրած լարված իրավիճակի պատճառով տարհանվել են Սոթքի հանքավայրի աշխատակիցները:

Այն փաստը, որ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությունը գիշերը կրակոցների պատճառով ստիպված է եղել դադարեցնել հանքավայրի աշխատանքը, վկայում է ադրբեջանական զինված ուժերի կողմից ընկերության օրինական ձեռնարկատիրական գործունեությունը խոչընդոտելու, աշխատակիցների իրավունքները կոպտորեն խախտելու, մարդկանց կյանքի համար իրական վտանգի մասին: Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ է արձանագրում, որ հողմակների այն տարածքը, որտեղից ադրբեջանական զինված ուժերը կրակել են, ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի

որոշմամբ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի հիման վրա տրամադրվել է ՀՀ-ում իրավական գրանցում ունեցող ընկերությանը և այդ ընկերության հետ կնքել 30 տարի ժամկետով վարձակալության պայմանագիր՝ ապահովելով գույքային իրավունքների պետական գրանցումը:

Այսինքն՝ հողատարածքը իրավական հիմքով պատկանում է ՀՀ-ում գրանցում ունեցող ընկերության օրինական տիրապետությանը, այն տրամադրվել է էլեկտրական էներգիայի արտադրության համար հողմային էլեկտրակայան կառուցելու և շահագործելու նպատակով: Նշված 200 հա հողատարածքից 75 հա-ի վրա ընկերությունը կառուցել է 2 հողմակ:

Այդ տարածք ադրբեջանական զինված ուժերն ապօրինաբար ներխուժել են 2020թ. նոյեմբերի 25-ին ու դրանով ընկերությանը պատճառել են շուրջ 5,000,000 ԱՄՆ դոլարի վնաս: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ հայտարարությամբ է հանդես եկել 2021թ. փետրվարի 5-ին:

Այսօր Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է ահազանգեր նաև այն մասին, որ ադրբեջանական զինված ուժերը հուլիսի 26-ին՝ վաղ առավոտյան ժամը 04:00-ի սահմաններում կրակոցներ են արձակել նաև Գեդարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղի սարատեղի կոչվող քաղաքացիական բնակավայրի հարևանությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ահազանգեր է ստացել նաև այն մասին, որ որ ադրբեջանական զինված ուժերը, Գեդարքունիքից բացի, հուլիսի 26-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում կրակոցներ են արձակել նաև ՀՀ Արարատի մարզի Երասխ համայնքի հարևանությամբ: Լսելի են եղել նաև գյուղում: Կրակոցները վերսկսել են նաև ժամը 15:30-ից և մինչ այս պահը շարունակվում են:

ՀՀ Գեդարքունիքի և Արարատի մարզերի նշված համայնքների անմիջական հարևանությամբ ադրբեջանական կրակոցների փաստերն ակնհայտ ապացուցում են, որ ՀՀ սահմանային, մասնավորապես՝ Գեդարքունիքի, Սյունիքի և վերջին օրերին նաև Արարատի (օրինակ՝ Երասխ գյուղ) մարզերի բոլոր այն հատվածներում, որտեղ քաղաքացիական բնակավայրերի հարևանությամբ ներկա են ադրբեջանական զինված ծառայողներ, նրանց պահվածքը նույնն է՝ կրակոցներ, կենդանիների գողություններ, խոտքաղի ու բերքահավաքի խոչընդոտներ, սպառնալիքներ և այլն:

Նկարագրված կրակոցները ևս մեկ անգամ ապացուցում են, որ ադրբեջանական զինված ուժերի ինքնին ներկայությունը ՀՀ քաղաքացիական բնակավայրերի հարևանությամբ, Սյունիքի համայնքների միջև ճանապարհներին առաջնահերթ ՀՀ բնակիչների կյանքի իրավունքի խախտում է:

Նրանց արարքները խախտում են ՀՀ բնակիչների սեփականության, ազատ տեղաշարժի, անասնապահությամբ զբաղվելու և ընտանիքի եկամուտը վաստակելու և մյուս կենսական իրավունքները: Դրանք ոտնահարում են քաղաքացիական բնակիչների անդորրն ու բնականոն կյանքը:

Գեդարքունիքի և Արարատի մարզերում հուլիսի 26-ի ադրբեջանական կրակոցների փաստերը պաշտոնապես հաստատել է նաև ՀՀ պաշտպանության նախարարությունը»,-ասված է հայտարարությունում:

<http://yerkir.am/news/view/245140.html>

Վիժվածքի մահը. կամ յոթերորդ գումարման Ազգային ժողովի անայիտան ծնունդն ու անփառունակ վախճանը. Էդգար Ղազարյան

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարել է ութերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովի առաջին նիստի օրը՝ 2021 թվականի օգոստոսի 2-ին: Այդ պահից կդադարեցվի յոթերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովի լիազորությունները, որը ձևավորվել էր 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների արդյունքում, պաշտոնապես ստանձնել լիազորությունները՝ 2019 թվականի հունվարի 14-ից: Չնայած այն հանգամանքին, որ, համաձայն ՀՀ Սահմանադրության, Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են հինգ տարի ժամկետով, յոթերորդ գումարման Ազգային ժողովը իր լիազորություններն իրականացրեց 2 տարի 6 ամիս և 19 օր:

Բժշկությանը վաղուց հայտնի ճշմարտություն է, որ բռնաբարությունից սերված և արհեստական վիժումից առաջացած միավորը երկար ապրել չի կարող, այն լիարժեք մարդ երբեք չի դառնում: Այդպիսին էր նաև յոթերորդ գումարման Ազգային ժողովը:

Ընդամենը մի քանի փաստ հուշում է, թե ինչու 2018 թվականին տեղի ունեցած խայտառակությունը խորհրդարանական ընտրություն համարել չի կարելի: Խորհրդարանական կառավարման երկրում, որտեղ միակ համապետական ընտրությունը Ազգային ժողովի ընտրությունն է, կազմակերպվել է արտահերթ՝ նախորդ ընտրությունից մոտ մեկուկես տարի հետո, երբ քաղաքական ուժերը բավականաչափ սպառել էին իրենց ռեսուրսները նախորդ ընտրության ժամանակ: Ընդ որում, 2017 թվականի Ազգային ժողովը լուծարելու և նոր ընտրություն կազմակերպելու անհրաժեշտություն բացարձակապես չկար, քանզի խորհրդարանը, վարչապետի հրաժարականից հետո, ընտրել էր նոր վարչապետ, հավանություն էր տվել կառավարության գործունեության ծրագրին, պատրաստակամություն էր հայտնել կողմ քվեարկել պետական բյուջեի նախագծի օգտին: Այսինքն, քաղաքական ճգնաժամ գոյություն չունեք, իսկ բոլոր գործընթացներ արհեստածին էին և ոչ հիմնավոր:

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի ընտրության օրը որոշել է մեկ մարդ՝ Նիկոլ Փաշինյանը՝ այդ մասին հայտարարելով Երևանի ավագանու արտահերթ ընտրություններում իր համար գոհացուցիչ արդյունքներ արձանագրելուց հետո, չնայած այն բանին, որ նախապես հայտարարել էր, որ արտահերթ ընտրություն կանցկացվի 2019 թվական մայիսի կամ հունիս ամիսներին: Ավելին, նախապես հայտարարվել է, որ ԱԺ ընտրություն կանցկացվի Ընտրական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո: Այդ նպատակով, փոխվարչապետի ղեկավարությամբ ստեղծվել էր աշխատանքային խումբ՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու, այն քաղաքական ուժերի հետ քննարկելու նպատակով: Գործընթացը դադարեցվել է, որևէ քննարկում, որևէ քաղաքական ուժի հետ չի իրականացվել, ընտրությունը կազմակերպվել է գործող օրենսգրքով:

2018 թվականի ԱԺ ընտրության ժամանակ գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանը գործի դնելով պաշտոնական և վարչական ողջ ռեսուրսը, այդ թվում իրավապահ մարմինների համակարգը, սպառնալիքների միջոցով խոչընդոտ է ստեղծել ընդդիմադիր ուժերին հարող կամ անդամակցող, հատկապես, ռեյտինգային ընտրակարգով առաջադրված, նախորդ ընտրություններում մեծ թվով քվեների արժանացած թեկնածուների առաջ: Հարկ է նկատել, որ նրանցից ոչ ոք չի առաջադրել իր թեկնածությունը 2018 թվականի ընտրության ժամանակ: Նախընտրական քարոզչության

ընթացքում արդեն իսկ ուժային կառույցների միջոցով քրեական հետապնդումներով հայտնի գործելառճ ընտրած վարչապետ Նիկոլ Փաշինյանն անձնական սպառնալիքներ է հնչեցրել այն համայնքների ղեկավարների հասցեին, որոնք համարձակություն են ցուցաբերել աջակցելու ընդդիմադիր ուժերին:

2018 թվականի դեկտեմբերին արձանագրվել է Հայաստանի պատմության մեջ համապետական ընտրությունների ռեկորդային ցածր մասնակցություն: Մասնավորապես, ընտրություններին մասնակցել է ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների 48,63%-ը (1.260.840 քաղաքացի): Դրա հետ մեկտեղ ընտրության արդյունքում արձանագրվել է իշխանությունը ներկայացնող քաղաքական ուժի աննախադեպ բարձր ցուցանիշ: Մասնավորապես, վարչապետի ղեկավարած քաղաքական ուժը ստացել է քվեարկության մասնակիցների 70,43% ձայներ: Հարկ է նկատել, որ 2017 թվականի ապրիլի 2-ին տեղի ունեցած ԱԺ ընտրություններում իշխող Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ստացել էր քվեարկության մասնակիցների 49,14% տոկոս ձայներ:

2018 թվականի ԱԺ ընտրության արդյունքներով ընտրական նվազագույն շեմը հաղթահարել են և Ազգային ժողովում են հայտնվել նվազագույն թվով քաղաքական ուժեր՝ ընդամենը երեք քաղաքական ուժ: Սա աննախադեպ է եղել Հայաստանի պատմության ողջ ընթացքում: 2018 թվականի ԱԺ ընտրության արդյունքում խորհրդարանում են հայտնվել միայն այն քաղաքական ուժերը, որոնք մինչ այդ քաղաքական համագործակցություն են հաստատել իշխող քաղաքական ուժի հետ՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը: Ընդդիմադիր ոչ մի ուժ խորհրդարանական ընտրություններում նվազագույն շեմ չի հաղթահարել: Դրա հետևանքով յոթերորդ գումարման Ազգային ժողովում ստեղծվեց անօրինական և անտրամաբանական փաստացի մի իրավիճակ, ըստ որի խորհրդարանում գոյություն չունեն ընդդիմություն: «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցություններն արհեստականորեն ստանձնել են ընդդիմադիր քաղաքական ուժերի կարգավիճակը՝ բոլոր սկզբունքային և կարևոր հարցերով համագործակցելով իշխանությունների հետ, կայացնելով իշխանահաճո որոշումներ:

Յոթերորդ գումարման Ազգային ժողովը նշանավորվեց նաև դրանով, որ ԱԺ ընտրության հետևանքով իշխող քաղաքական ուժի ցուցակով ԱԺ պատգամավորի մանդատ են ստացել առավելապես հանրությանը ոչ հայտնի գործիչներ, որոնցից ոչ մեկը սեփական արժանիքներ, անձնական հեղինակություն, քաղաքական վաստակ ու վարկանիշ չի ունեցել ԱԺ պատգամավոր դառնալու համար: Դա նաև իր բացասական հետք է թողել նրանց գործունեության վրա՝ ի վերջո ձեռք բերելով Նիկոլ Փաշինյանի «ուսապարկ» լինելու անպատվաբեր դրոշմը: Նրանց շարքերի համալրումը կոռուպցիայի դրսևորումների մի ամբողջական շարք է ներկայացնում: Մասնավորապես, իշխանական ցուցակով պատգամավոր են դարձել Նիկոլ Փաշինյանի աներձագը, եղբոր որդին, քավորի եղբայրը, իր նախկին օգնականը, իր կողմից ղեկավարված «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող իր նախկին գործընկերները, Գյումրից Երևան ճանապարհին, փողոցային թափառող շան՝ Չալոյի հետևից քայլած բազմաթիվ անարժաններ, որոնց պարագայում նախարարի, փոխնախարարի կամ Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը ոչ միայն առաջին պետական, այլ որոշների դեպքում՝ առաջին աշխատանքն է եղել ընդհանրապես:

2021 թվականի մայիսի 10-ին օրենքի ուժով արձակված և 2021 թվականի օգոստոսի 2-ի իր լիազորությունները դադարեցրած յոթերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովը պատմության մեջ

կմնա հետևյալ անփառունակ փաստերով, որոնք նաև կործանարար հետևանքներ ունեցան հայ ժողովրդի պատմության մեջ:

Նախ այդ խորհրդարանը Նիկոլ Փաշինյանի ընտրել է ՀՀ վարչապետի պաշտոնում՝ սկիզբ դնելով Հայաստանի Հանրապետության պատմության ամենակործանարար և ողբերգական էջին:

«Ուսապարկ»-երի մեծամասնության այդ խորհրդարանն էր, որ երկու անգամ չընտրելով Հանրապետության նախագահի կողմից առաջարկված Սահմանադրական դատարանի դատավորի երկու տարբեր թեկնածուների և, քաղաքական ճնշումներ գործադրելով Հանրապետության նախագահի վրա, խախտելով օրենքը, ստիպեցին նախագահին ՄԴ դատավորի թեկնածու առաջադրել իրենց քաղաքական թիմակցին, Նիկոլ Փաշինյանի անձնական փաստաբան, նախկին պետական որևէ պաշտոն չգրադեցրած և բացառապես քաղաքական գործունեությամբ աչքի ընկած Վահե Գրիգորյանի՝ սկիզբ դնելով անատողջ մթնոլորտն ու ֆունկցիոնալ ճգնաժամը Սահմանադրական դատարանում:

Յոթերորդ գումարման ազգային ժողովը պատմության մեջ կմնա նաև դրանով, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանել է ամենաերկար տևողությամբ արտակարգ դրության ռեժիմը, որով տևական ժամանակ սահմանափակվել են քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, չեն կազմակերպվել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, սակայն դրա դիմաց չի լուծվել համավարակը կանխելու ու տարածելու խնդիրը:

Չարաբաստիկ այդ խորհրդարանին բաժին հասավ, Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ, հայտարարել ռազմական դրություն՝ առանց հետևողականություն ցուցաբերելու այդ իրավական ռեժիմի կատարման նկատմամբ: Չնայած ռազմական դրության իրավական ռեժիմին և համընդհանուր զորակոչ հայտարարելու որոշմանը, այդպես էլ այն չի իրագործվել, չի լուծվել երկիրն արտաքին սպառնալիքներից պաշտպանելու խնդիրը, իսկ այն չեղարկվել է բացառապես քաղաքական պատճառներով: Պատերազմի օրերին խորհրդարանը ցուցաբերել է ֆունկցիոնալ իմաստով բացարձակ անգործություն և անգամ տեղյակ չի եղել այն փաստաթղթի գոյության մասին, որով հայտարարվել է հրադադար, իսկ թշնամուն են հանձնվել մեր երկրի հսկայական տարածքներ: Խորհրդարանական մեծամասնության պատգամավորների «առաքելությունը» սահմանափակվել է Արցախի մայրաքաղաքից լուսանկարներ հրապարակելով, ինչպես նաև Նիկոլ Փաշինյանի որդու «ռազմական սխրանքները» փառաբանելով:

Դրան գուցահեռ, յոթերորդ գումարման Ազգային ժողովը ստեղծել էր մեծ աղմուկ բարձրացրած Ապրիլյան պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով, որը, խախտելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Սահմանադրական օրենքը, այդպես էլ չներկայացրեց զեկույց և մեր բանակն ու հաղթանակն անարգելուց բացի, չունեցավ որևէ այլ իմաստ ու նշանակություն:

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի ամենամեծ հանցանքներից մեկն էր Սահմանադրական դատարանի հանդեպ սկսված քաղաքական արշավը: Տխրահոչակ Վահե Գրիգորյանին ՄԴ դատավոր ընտրելուց հետո, օգտագործելով իրավապահ ողջ համակարգը, ապօրինի և քաղաքական ահաբեկչություն սկսվեց Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի, նրա ընտանիքի անդամների, մերձավորների և հարազատների նկատմամբ՝ անթաքույց պահանջելով նրա հրաժարականն այդ պատասխանատու, ապաքաղաքական պաշտոնից: Բոլոր անթույլատրելի մեթոդներով իրականացված արշավը, ապացուցեց միայն մի բան. Հրայր Թովմասյանի անբասիր անցյալն ու անկոտրում սկզբունքայնությունն ու պետականության իր բաժին հատվածն անառիկ պահելու համատությունը: Սակայն դա չխանգարեց պատգամավորի

մանդատը ստացած ապօրեն սրիկաներին շարունակել պետականակործան իրենց արշավը՝ նախաձեռնելով անօրեն հանրաքվե՝ նպատակ ունենալով դադարեցնել ՄԴ նախագահ Հրայր Թովմասյանի և Սահմանադրական դատարանի յոթ դատավորների լիազորությունները: Համավարակի պատճառաբանությամբ, սակայն իրականում, քաղաքական ձախողման հետևանքով, հանրաքվեն չեղարկելուց հետո, Ազգային ժողովը նախ նախաձեռնություն ցուցաբերեց դադարեցնել ՄԴ դատավոր Հրայր Թովմասյանի լիազորությունները, այնուհետև հատուկ օրենք ընդունեց, որով, ըստ էության, պետական միջոցներով կաշառք էր առաջարկվում ՄԴ իրենց համար անցանկալի դատավորներին՝ պաշտոնից հեռանալու և նրանց փոխարեն ՄԴ կազմը յուրայիններով փոխարինելու համար: Չհաջողված այն նախաձեռնությունից հետո Ազգային ժողովը, հատելով ապօրինությունների բոլոր սահմանները, առանց հանրային քննարկումների, առանց անգամ խորհրդարանական մյուս ուժերի հետ քննարկումների, ընդամենը չորս ժամում, խախտելով ՀՀ Սահմանադրության պահանջները, կատարեցին փոփոխություններ Սահմանադրության մեջ, ինչի իրավունքը նրանք չունեին, որի հետևանքով կարողացան ապօրինաբար լուծել իրենց նենգ ու դավադիր քաղաքական խնդիրը՝ պաշտոնազրկելով Հրայր Թովմասյանին և Սահմանադրական դատարանի օրինական ընտրված երեք դատավորներին: Դրան հաջորդեց Սահմանադրական այնպիսի ճգնաժամ, որի հետևանքով շուրջ երկու ամիս խաթարվել էր Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունը, որի հետևանքներն անջնջելի հետք թողեցին ոչ միայն սահմանադրական արդարադատության, այլև մեր պետականության պատմության մեջ:

Արդարադատության համակարգի հանդեպ ոտնձգությունները Սահմանադրական դատարանով չսահմանափակվեցին: Յոթերորդ գումարման Ազգային ժողովը, խախտելով օրենքը, Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) անդամ ընտրեց իրենց քաղաքական թիմակցին, Հայաստանում ընտրախախտումների, կոռուպցիայի և ամենաթողության «նախահայր» Գագիկ Ջհանգիրյանին՝ սկիզբ դնելով արդարադատության համակարգի հանդեպ իրենց վայրագություններին:

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի հակապետական և ապազգային գործունեության վերջին արարը եղավ այն, որ հետպատերազմյան շրջանում, բոլոր առումներով ձախողած, հայ ժողովրդի ամենամեծ թշնամի և ամենամեծ դավաճան՝ Նիկոլ Փաշինյանի կողմից վարչապետի պաշտոնից հրաժարական ներկայացնելուց հետո, երկու անգամ, կանխամտածված և կազմակերպված կերպով չեն ընտրել ՀՀ վարչապետ՝ դրանով իսկ միտումնավոր կերպով կայացնելով իշխանության տապալում և հիմք դնելով իշխանազավթման գործընթացին, որը հանցավոր իշխանություններն իրականացրեցին 2021 թվականի հունիսի 20-ին և արդեն իրենց կողմից ստեղծված Սահմանադրական դատարանի միջոցով դակեցին այդ ապօրինության արդյունքները:

Ահա այդ անվիճելի փաստերով է հիշվելու բռնաբարությունից սերված կարճատև կյանքով վիժվածքի պատմությունը, որը կոչվել է յոթերորդ գումարման Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Վստահ եմ, որ կգա ժամանակ ու այս ամենի համար մարդիկ կկանգնեն պատասխանատվության առջև: Հազարամյակների ազնիվ պայքարի արդյունքում կերտված Հայաստանի Հանրապետության հանդեպ այս բարբարոսություններն անպատիժ մնալ չեն կարող:

<http://politik.am/am/vizhvatsqi-mahy-kam-yoterord-gumarman-azgayin-zhoxovi-anpitan-tsnundn-u-anparunak-vakhchany-edgar-xazaryan>

26.07.2021

Այս գիշեր Ադրբեջանի ԶՈՒ-ն կրակ է բացել Գեղարքունիքում մեր դիրքերի ուղղությամբ. իսկ առավոտյան՝ Երասխի ուղղությամբ. ՊՆ

Հուլիսի 26-ին, ժամը 03:30-ի սահմաններում, ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումները, տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

ՊՆ-ից [NEWS.am](https://news.am)-ին հայտնում են, որ հայ դիրքապահների պատասխան գործողությունների արդյունքում կրակը լռեցվել է: Հայկական կողմից տուժածներ չկան:

Հուլիսի 26-ին, ժամը 11:30-ից սկսած, հակառակորդը հրադադարը խախտել է նաև հայ-ադրբեջանական սահմանի Արարատի մարզի, մասնավորապես՝ Երասխի ուղղությամբ, տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ բացելով հայկական դիրքերի ուղղությամբ: Հայկական կողմը դիմել է հակազդող գործողությունների:

<https://news.am/arm/news/655328.html>

26.07.2021

Ռուս սահմանապահներն այցելել են Նորաբակ՝ տնակներ են կառուցելու. Կուրթում ադրբեջանցիները քարով խփել են հացի մեքենայի վարորդին, գլուխը ջարդել. Նորաբակցի

Ռուս սահմանապահները տեղակայվելու են Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղում: «Փաստինֆո»-ի հետ զրույցում նորաբակցի, օպերատոր Արմեն Ղազարյանը տեղեկացրել է, որ սահմանապահներ են եկել գյուղ, սար բարձրացել ու գնացել: Տեղյակ են միայն, որ պետք է կառուցեն տնակներ:

«15 օր առաջ ռուս սահմանապահները եկան, սար բարձրացան, իջան, թողին գնացին: Սոթքի տարածքում նրանց համար դոմիկներ պետք է սարքեն: Դա տարիների հարց է: Նրանց համար պալատկաներ են պետք, որ գան տեղավորվեն: Բայց դե երբ պետք է կառուցվի՝ Աստված գիտի: Գետուկ կոչվող հատված ունենք, այնտեղ էլ քարեր են թափում, որ նրանց համար դոմիկներ սարքեն», - ասաց Ղազարյանը:

Նորաբակում ադրբեջանցիների հետ միջադեպեր շատ չեն լինում: Կեսգիշերից հետո ադրբեջանցիների արձակած կրակոցներն իրենք չեն լսել: Հարևան Կուրթում օրեր առաջ ադրբեջանցիները, օրինակ՝ հայկական պոստեր հաց տանող մեքենավարի ուղղությամբ են քարեր նետել:

«Կուրթում պալատկաները իրար հետ վերև-ներքև են: Մերոնք մի քիչ ներքև են: Երեք օր առաջ Գազո անունով մեկին՝ հացի մեքենայի վարորդին թուրքը քարով խփել էր, գլուխը ջարդել»:

Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի տարածքում ադրբեջանական զինվորականների խուժումից հետո մարդիկ ապրում են լարվածության մեջ: Գյուղացիները հնարավորություն չեն ունենում մոտենալ գյուղի խոտհարքներին և կենդանիներին արածացնել գյուղի հարակից սարերում:

«Էս պահին մեր աշխատանքներին 100 տոկոսանոց խոչընդոտում են: Աղբբեջանական կողմը հատկապես մեր հողատարածքների մեջ է՝ խոտհարքների ու արոտների մեջ: Վաղը մյուս օր կարող է ականապատում են՝ ո՞վ գիտի: Կույր-կույր պիտի հեղնենք խոտ քաղենք: Ես չգիտեմ սրա վերջը ոնց կլինի»:

Խոտհարքերը, արոտները գտնվում են գյուղից 7 կմ հեռավորության վրա: Խորհրդային միության ժամանակվանից դրանք Նորաբակին են պատկանել: Հիմա աղբբեջանցիները տեղակայված են հենց այդ տարածքներում: Գյուղացիները պարզապես չեն կարողանում իրենց իսկ տարածքում խոտը հնձել ու քաղել:

«Գյուղում ֆինանսական ճգնաժամ է: Անասնապահական տարածք է, անասունն էլ գին չունի: Մարդիկ ուզում են անասուն ծախեն՝ գոուբի ասած՝ էսօր մսի կգ-ն 3000 դրամ է, էստեղ կովի միսը 1400 դրամով են ծախում: Սկի չգիտեն ինչ անեն: Խոտն էլ կրակի գին է: Յորենի սալոմի արժեքը 1000, խոտը՝ 2500 դրամ է: Մարդիկ էլ պետք է խոտերը քաղեին, աղբբեջանցիները մեր սարերի ձախ հատվածում նստած են»:

Հարցին, արդյոք փոխհատուցում ստացել են, նշեց՝ «Պետություն ունե՞նք: Փոխհատուցում չենք ստացել: Ո՞վ ա մեր տերը: Ռուսի կամակատարն ենք»: Կենդանիներին արոտի տանում են շատ սուղ պայմաններում:

«Երաշտն էլ մի կողմից: Քանի որ այդ տարածքները զբաղեցրել են, պայմանները սուղ են: Համայնքն էլ հարուստ է անասնագլխաքանակով: 2000 գլուխ ոչխար կա: 1500 և ավելի խոշոր գլուխ անասուն կա: Երաշտ տարում ո՞նց պետք է պահեն: Շատերը կարիքից ուզում են ծախեն, առնող էլ չկա՝ են գինը չունի»:

Արմենը տեղեկացրեց, որ երիտասարդներն արտագաղթում են: Գյուղում էլ աշխատանք չի մնացել:

«Եթե մի տեղ գործ չլինի, եթե խոտհարքները վերանան, գյուղացիները մնում են եղտեղ ի՞նչ անեն: Եթե ռուս սահմանապահները գան, աղբբեջանցիները գնան ելման դիրքեր, մերոնք պետք է հետ գնան, ռուս սահմանապահները միջանկյալ տարածք վերցնեն: Էս գյուղում մնալը դառնում է անիմաստ: Գյուղում ոչ զավոդ կա, ոչ աշխատանքի վայր: Ապրողները նախկին փախստականներ են: Ես ստեղ 17 հազար դոլար փող եմ դրել տանս վրա, դարձրել Երևանի տուն, ինձ թվում է՝ կորելու է գնա: Ո՞վ է գյուղի մասին մտածում»:

Աղբբուր՝ Փաստինֆո

<https://www.pastinfo.am/hy/news/2021/07/26/d6qllnz7c/1244457>

26.07.2021

ԱՄՆ դեսպանն այցելել է Գեղարքունիքի մարզ

Հուլիսի 26-ին ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Լին Թրեյսին ՀՀ ՊՆ ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել է Գեղարքունիքի մարզ:

Զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Արայիկ Հարությունյանը դեսպանին ներկայացրել է հայ-աղբբեջանական սահմանին տիրող իրավիճակը, որից հետո կազմակերպվել է այց Վերին Շորժայի հատվածի սահմանագիծ:

Դեսպան Թրեյսին վերահաստատել է ԱՄՆ-ի մտահոգությունը հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով միջադեպերի վերաբերյալ և ընդգծել, որ ԱՄՆ-ն մերժում է ուժի կիրառումը սահմանագատում իրականացնելու պարագայում:

Դեսպանը նաև ընդգծել է, որ ԱՄՆ-ն, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր, խորապես հավատարիմ է մնում դարաբաղյան հակամարտության երկարաժամկետ քաղաքական լուծմանը հասնելու նպատակով բոլոր կողմերի հետ աշխատելու գործընթացին: Միաժամանակ, ըստ Լին Թրեյսիի, ԱՄՆ-ն կողմերից պահանջում է հնարավորինս արագ վերադառնալ Մինսկի խմբի համանախագահների մակարդակով ընթացող բանակցություններին:

<https://lurer.com/?p=427869&l=am>

25.07.2021

Երասխում կրակում են, Կուրթում կրակում են, նախագահը գնացել է Տոկիո օլիմպիական խաղեր նայելու. Հրանտ Բագրատյան

Երասխում կրակում են, Կուրթում կրակում են, սահմանների երկայնքով հրդեհ է: Նախագահը գնացել է Տոկիո օլիմպիական խաղեր նայելու: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը:

<https://news.am/arm/news/655242.html>

24.07.2021

Երեկ Գեղարքունիքում վիրավորված ժամկետային զինծառայողին 8 ժամ վիրահատել են, հեռացվել է երիկամը, վիճակը ծանր կայուն է

Գեղարքունիքի մարզի Կուրթ համայնքի վարչական տարածքում տեղակայված մարտական հենակետում հերթապահություն իրականացնելիս հակառակորդի կողմից վիրավորված ժամկետային զինծառայող Արման Աթաջանի վիճակը ծայրահեղ ծանր է: Այս մասին lurer.am-ին հայտնել է ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետ, գնդապետ Սահակ Օհանյանը:

«Վնասվել է հաստ աղիքը, բարակ աղիքը, հեռացվել է ձախ երիկամը: 8 ժամ վիրահատությունից հետո առավոտյան ժամը 6-ին տեղափոխվել է կենտրոնական կլինիկական հոսպիտալ:

Երկու զինծառայողների վիճակը թեթև է, գնդակային վիրավորումներ են եղել ստորին վերջույթների, համապատասխան բժշկական օգնությունը ցուցաբերվել է, հուսով են՝ կարճ ժամանակ հետո շարք կվերադառնան», - ասել է նա:

Իսկ հարցին, թե ինչո՞ւ էր ՊՆ-ն հաղորդագրություն տարածել, թե ադրբեջանական կողմի հերթական սադրանքի արդյունքում սկսված ինտենսիվ փոխհրաձգության հետևանքով զինծառայողները հրազենային թեթև վիրավորում են ստացել, երբ մեկը ծայրահեղ ծանր է, գնդապետ Օհանյանը պարզաբանեց:

«Այդ գնահատականը տրվել է վիրավորում ստանալուց շատ կարճ ժամանակ հետո: Իրականում յուրաքանչյուր վիրավորումը, եթե կենսամահի չի բերում, նախատեսում է, որ վիրավորում ստացած զինծառայողն աղեկվատ է լինում, հարցերին պատասխանում է, հնարավորություն է տվել այդպես

գնահատել: Երբ տեղափոխվել են Գեղարքունիքի հոսպիտալ, մասնագետներն ուսումնասիրել են և վիրահատության ընթացքում տեսել են, որ վիճակը ծանր է», - ասել է նա:

Միջադեպի հետ կապված Քննչական կոմիտեում հարուցվել է քրեական գործ՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով երկու և ավելի անձանց սպանության փորձի համար:

<https://news.am/arm/news/655213.html>

24.07.2021

Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղի ուղղությամբ աղբբեջանական զինված ուժերը այսօր նույնպես կրակել են. ՀՀ ՄԻՊ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը այսօր ահազանգեր է ստացել, որ աղբբեջանական զինված ուժերը երեկ՝ 2021թ. հուլիսի 23-ին անմիջապես ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղի սարատեղի կոչվող բնակավայրի մոտ հրահրել են հրաձգություն: Այս մասին հայտնում է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

«Մասնավորապես, հուլիսի 23-ին՝ ժամը մոտ 20:00-ից մինչև 00:30-ը ընկած հատվածում աղբբեջանական զինված ուժերը տարբեր տրամաչափի զենքերից ինտենսիվ կրակել են հայկական զինված ուժերի դիրքերի վրա, ինչպես նաև կրակել են սարատեղի կոչվող բնակավայրի ուղղությամբ: Սարատեղին այն վայրն է, որտեղ սեզոնային՝ գարնան, ամռան և աշնան ամիսներին բնակվում են մի քանի տասնյակ քաղաքացիական բնակիչներ և արոտավայրում արածեցնում իրենց եղջերավոր կենդանիներին:

Բնակիչների տեղեկացմամբ՝ կրակոցներով աղբբեջանական զինված ուժերը լրջագույն վտանգ են ստեղծել իրենց կյանքի և ֆիզիկական անվտանգության համար, խաթարել են ողջ բնակավայրի հանգիստը: Ստիպված են եղել ողջ գիշեր պատսպարվել:

Կրակոցների պատճառով են միայն հաջորդ օրն առավոտյան՝ հուլիսի 24-ին, ժամը 07:00-ի սահմաններում իրենց կովերից մեկին հայտնաբերել աղբբեջանական կրակոցներից սատկած վիճակում (նկարներում քաղաքացիական բնակչի սատկած կենդանին է):

Նշվածից բացի, ահազանգեր են ստացվել այն մասին, որ աղբբեջանական զինված ուժերը կրակել են նաև այսօր՝ հուլիսի 24-ին, առավոտյան ժամը՝ 11:30-ից մինչև 12:00-ի սահմաններում:

Վերին Շորժա գյուղի սարատեղի բնակավայրի տները 2021թ. մայիսի 12-ից հայտնվել են աղբբեջանական զինված ուժերի ուղիղ թիրախում այն պահից, երբ նրանք անօրինական ներխուժել են ՀՀ ինքնիշխան տարածք: Ավելին, նրանք տեղակայված են քաղաքացիական տներից մոտ 150մ հեռավորությամբ:

Աղբբեջանական զինված ուժերի արարքները հանցավոր են: Դա հիմնավորվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Կույթ, Սոթք, Ագատ և Վերին Շորժա գյուղերի անմիջական հարևանությամբ աղբբեջանական զինված ուժերի վերջին օրերին սանձազերծած կրակոցների ֆոնին և նաև ապացուցվում է այն փաստով, որ այդ հատվածում աղբբեջանական պարբերական դարձած կրակոցներից վերջին ժամանկներս զոհվել կամ վիրավորվել են ՀՀ զինված ուժերի զինձառայողներ:

Փաստերն ակնհայտ ապացուցում են, որ ՀՀ սահմանային, մասնավորապես՝ Գեղարքունիքի, Սյունիքի և վերջին օրերին նաև Արարատի (օրինակ՝ Երասխ գյուղ) մարզերի բոլոր այն

հատվածներում, որտեղ քաղաքացիական բնակավայրերի հարևանությամբ ներկա են ադրբեջանական զինված ծառայողներ, նրանց պահվածքը նույնն է՝ կրակոցներ, կենդանիների գողություններ, խոտքաղի ու բերքահավաքի խոչընդոտներ, սպառնալիքներ և այլն:

Այլ կերպ ասած, 2021թ. հուլիսի 23-ի և 24-ի կրակոցները ևս մեկ անգամ ապացուցում են, որ ադրբեջանական զինված ուժերի ինքնին ներկայությունը ՀՀ քաղաքացիական բնակավայրերի հարևանությամբ, Սյունիքի համայնքների միջև ճանապարհներին առաջնահերթ ՀՀ բնակիչների կյանքի իրավունքի խախտում է:

Նրանց արարքները խախտում են ՀՀ բնակիչների սեփականության, ազատ տեղաշարժի, անասնապահությամբ զբաղվելու և ընտանիքի եկամուտը վաստակելու և մյուս կենսական իրավունքները: Դրանք ոտնահարում են քաղաքացիական բնակիչների անդորրն ու բնականոն կյանքը:

Ընդ որում, հուլիսի 23-ի ադրբեջանական կրակոցների փաստը Գեղարքունիքի մարզում պաշտոնապես հաստատել է նաև ՀՀ պաշտպանության նախարարությունը»:

Արման Թաթոյան

<https://news.am/arm/news/655210.html>

24.07.2021

Հայտնի են Գեղարքունիքի ուղղությամբ վիրավորում ստացած զինծառայողների անունները. նրանցից մեկի վիճակը ծայրահեղ ծանր է

2021թ. Հուլիսի 23-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Գեղարքունիքի մարզի Կուլթ համայնքի վարչական տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տակ գտնվող մարտական հենակետում հերթապահություն իրականացնելիս, հակառակորդի հետ փոխհրաձգության հետևանքով, հրազենային մարմնական վնասվածքներ են ստացել պարտադիր ժամկետային զինծառայող Արման Գուրգենի Աթաայանը, պայմանագրային զինծառայողներ՝ Լեոնիկ Հենրիկի Նավոյանը և Յուրիկ Աշոտի Օհանյանը: Այս մասին հայտնում են ՀՀ Քննչական կոմիտեից:

Վերջիններս տեղափոխվել են Գեղարքունիքի կայազորային հոսպիտալ, որտեղ Ա.Աթաայանի վիճակը գնահատվել է ծայրահեղ ծանր:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 7-րդ և 13-րդ կետերով:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Նշենք, [որ երեկ ՊՆ-ն հայտնել էր](#), որ սահմանային փոխհրաձգության հետևանքով հրազենային թեթև վիրավորում է ստացել ՀՀ ԶՈՒ 3 զինծառայող: Նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

<https://news.am/arm/news/655128.html>

23.07.2021

Ուշադրություն

📌 ՀՀ-ում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբում այսուհետ գործում է հոգեբանի ծառայություն և նույն հասցեում հատկացված է գրասենյակ, որտեղ կարող եք դիմել խորհրդատվության նպատակով՝ առանց տարիքային սահմանափակման:

Հոգեբանի ծառայությանը կարող են դիմել՝

➤ անհայտ կորած անձանց կամ ռազմագերիների ընտանիքի անդամները, հարազատները.

➤ գերության մեջ գտնված անձինք, նրանց ընտանիքի անդամները.

➤ ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում կամ հաշմանդամություն ստացած անձինք, նրանց ընտանիքի անդամները.

➤ զոհված զինծառայողների կամ քաղաքացիական անձանց ընտանիքի անդամները.

➤ ռազմական գործողություններին մասնակցած անձինք (գորահավաքային զորակոչով ներգրավվածներ, կամավորականներ).

➤ տեղահանվածները (երեխաների՝ շտկողական, վերականգնողական և զարգացնող աշխատանքներ).

➤ պատերազմին անուղղակի մասնակցություն ունեցող անձինք.

➤ գործող զինվորականներ.

➤ նախագորակոչային տարիքի քաղաքացիներ.

📍 Նախապես գրանցվելու և պայմանավորվելու համար կարող եք զանգահարել հոգեբան Խոդաբախյան Կարինեին՝ հետևյալ հեռախոսահամարով՝ 055348746:

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=211983147602101&id=100063712502018

23.07.2021

Աղրբեջանցիները կրակել են Գեղարքունիքի դիրքերին. երեք զինծառայող թեթև վիրավորվել է

Հուլիսի 23-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Աղրբեջանի զինված ուժերը կրակ են բացել հայ-աղրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Այս մասին հաղորդում է ՀՀ պաշտպանության նախարարությունը:

Ըստ ՊՆ-ի հաղորդագրության՝ դրան նախորդել են կրակահերթեր հենց իրենց՝ աղրբեջանական մարտական հենակետերում, ինչը կարող է պայմանավորված լինել աղրբեջանցի զինվորականների միջև տեղի ունեցած՝ միջանձնային բնույթ կրող միջադեպով:

«Դրա մասին է խոսում նաև փաստը, որ Աղրբեջանի պաշտպանության նախարարությունն իր հաղորդագրության մեջ նշում է, թե հայկական կողմի բացած կրակից հետո աղրբեջանցի

զինվորական է զոհվել: ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարում է, որ հակազոռո գործողությունների չի դիմել մինչև այն պահը, երբ Ադրբեջանի զինված ուժերը կրակ են բացել հայ դիրքապահների ուղղությամբ:

Ադրբեջանական կողմի հերթական սադրանքի արդյունքում սկսված ինտենսիվ փոխհրաձգության հետևանքով հրազենային թեթև վիրավորում է ստացել ՀՀ զինված ուժերի 3 զինծառայող: Նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը խստիվ դատապարտում է Ադրբեջանի զինված ուժերի հերթական սադրանքը: Իրադրության սրման ողջ պատասխանատվությունն ընկնում է Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության վրա», - ասվում է ՊՆ հաղորդագրությունում:

<https://hetq.am/hy/article/133685>

20.07.2021

Կուրս գյուղում մոտ 4 ժամ ծանր զինատեսակներից կրակոցներ են հնչել. գյուղապետ

Գեղարքունիքի մարզի Կուրս գյուղում մոտ 4 ժամ ծանր զինատեսակներից կրակոցներ են հնչել: Այս մասին [NEWS.am](https://news.am)-ի գրույցում ասաց Կուրսի համայնքապետ Միմա Չիտչյանը:

«Զինատեսակները հստակ չեմ տարբերում, բայց ավտոմատի կրակոցներ չեին, ուրիշ զենքեր էին, ծանր զենքեր էին: 21:30-ից մինչև 00:30 տեսեց կրակոցները: Ինտենսիվ կրակոցներ էին», - ասաց գյուղապետը:

Նա ասաց, որ հայկական կողմից պատասխան նույնպես եղել է. «Մուր էր, բայց տեսնում էինք, որ մերոնք էլ պատասխանում էին: Բայց չեմ կարող ասել՝ ո՞ր էին կրակում, թե դիրքից դիրք: Ամեն դեպքում բոլոր դիրքերից էլ կրակոցներ հնչել են»:

Նշենք, որ մի քանի օր է՝ լարված իրավիճակ է նաև հայ-ադրբեջանական սահմանի Երասխի հատվածում: Հուլիսի 19-ի ուշ երեկոյան եւ 20-ի գիշերը, մինչև ժամը 02:00, ադրբեջանական զինված ուժերը շարունակել են հրաձգային զինատեսակներից, առանց ականանետերի կիրառման, գնդակոծել հայ-ադրբեջանական սահմանի Երասխի հատվածում տեղակայված հայկական դիրքերը:

Մի քանի ժամ տեսած ինտենսիվ փոխհրաձգության հետևանքով հայկական կողմից հրազենային վիրավորում է ստացել Երասխ համայնքի ղեկավար Ռադիկ Օղիկյանը, ով այդ պահին կազմակերպում էր ադրբեջանցիների գործողությունների արդյունքում տեղանքում բռնկված հրդեհը մարելու աշխատանքները:

<https://news.am/arm/news/654483.html>

19.07.2021

Թշնամին նստած է գյուղի խոտհարքներում եւ օդ է կրակում. գեղամասարցիները վերացնում են եղջերավորներին

Գեղամասարը գրկվել է խոտհարքներից: Թշնամին գյուղի բարձունքներում նստած է, գյուղացիներն էլ, ճարը կտրած, վերացնում են եղջերավորներին:

«Տարածքների մեծ մասը Կուրում, Նորաբակում մեր վերահսկողությունից դուրս է: Մարդիկ չեն կարողանում անասունները տանեն: Անասնակեր խոտի գործն էլ շատ վատ վիճակում է, շատ դաժան: Խոտի մի հակը 2000 դրամ է դարձել: Մարդիկ, ստիպված, անասուններն են քչացնում, մի մասը, թեկուզ միևնուսով, փորձում է դիմադրել, վնասով կարողանա պահել, բայց անասնապահությունը մարդկանց տանում է միևնուսի», - Yerkir.am-ին ասաց Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի ղեկավար Հակոբ Ավետյանը:

Երկու ամսից ավելի թշնամին նստած է բնակավայրի բարձունքներում՝ տեղի ապրողներին գրկելով անասնապահությունից ու գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելուց: Քանի որ բնակավայրը բարձրադիր է, գյուղացիները յայլաներ չեն բարձրանում, այլ եղջերավորներին պահում են գյուղում, ինչն այսօր անհուսալի եւ վտանգավոր է դարձել:

«Եթե մի կովը 2000 դրամի կեր պիտի ուտի օրական, չի կարող 500 դրամի օգուտ տալ: Էդ դեպքում էլ կով պահելու իմաստը ո՞րն է: Էս տարի մեզ մոտ ընդհանրապես գյուղատնտեսություն չկա, ինչ էլ որ կար, էս երաշտը վառեց, ամեն ինչ փչացել է, բոլորը գրկվել են իրենց բերքից», - ասաց Գեղամասարի ղեկավարը:

Բնակավայրում, գյուղի ղեկավարի խոսքով, լարվածությունը պահպանվում է, թշնամին դեմ դիմաց նստած է:

Շատ տարածքներ գյուղացիները արդեն չեն էլ կարող գնալ: Մերն է, թշնամունը չի, բայց իրենք էդտեղ նստած են: Անորոշ, սպասողական վիճակ է: Լարված վիճակը պահպանվում է: Նրանք կրակում են, բայց օդ են կրակում: Բայց էդ կրակոցն էլ խուճապ է առաջացնում: Հենց դիտավորյալ էլ անում են, որ խուճապ լինի, - Yerkir.am-ի հետ զրույցում ասաց Հակոբ Ավետյանը:

<http://yerkir.am/news/view/244513.html>

18.07.2021

Եթե այսպես շարունակվի, գյուղը հաստատ, 100 տոկոսով կդատարկվի. Կուրի գյուղապետ

Կուրի բնակիչները վախենում են տեխնիկա բարձրացնել խոտհարքերը եւ ստիպված ձեռքով են քաղում խոտը: Այս մասին NEWS.am-ի հետ զրույցում ասաց Կուրի գյուղապետ Սիմա Չիտյանը՝ պատմելով, թե ինչքան են դժվարացել գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը գյուղում՝ աղբբեջանցի զինծառայողների գյուղի մոտ դիրքավորվելուց հետո:

«Գյուղացիները գնում են վախվիսելով խոտ են քաղում, չգիտենք՝ ինչ կլինի: Խոտը գերանդիով են քաղում, վախենում են տեխնիկա տանեն, որ թշնամին չտեսնի: Աղբբեջանցիները էնտեղ դիրքեր են կառուցել, վրանները դրել են, լրիվ տեղավորվել են: Դեռ խոտը քաղում են միայն, չեն բերել ու չգիտենք էլ ինչ պետք է լինի, ոնց պետք է բերենք էդ խոտը», - ասաց նա: Տիկին Չիտյանը ասաց, որ անասուններին էլ արդեն արածեցնելու տեղ չկա, քանի որ եղած առտավայրերը թշնամու դիրքավորված վայրերի մոտ է, իսկ գյուղի մոտ այնքան են արածացրել, որ արդեն խոտ էլ չկա:

Համայնքապետի խոսքով՝ կուրեցիների հույսը ռուս խաղաղապահներն էին, որոնք էլ չեկան, որպեսզի իրենց ավելի ապահով զգային:

«Մենց ապրել հնարավոր չի, որտեղ նայում ենք, իրանց պոստերն է: Նամանավանդ, որ էս անասուններն էլ գողացան, տարան, բնակիչները ընդհանրապես հիասթափված են: Հլը սպասում են, տեսնեն Կառավարությունը ինչ է ասելու, փոխհատուցում կլինի, թե՛ չէ: 19 կով մի ընտանիքի է պատկանում, 18 կով մի ընտանիքի, էտի հանաք չի, դա ամբողջ կյանքի ապրուստ է, Կառավարությունից էլ ոչ մի օգնություն չկա: Ընդհանուր առմամբ 5 ընտանիքից 80 կով են տարել: Ընտրություններից առաջ ասացին, որ եթե չկարողանան անասուններին վերադարձնել, փոխհատուցում կտան, ու ոչ մի ձայն դեռ չկա», - ասաց նա: Տիկին Չիտչյանը վստահ է, որ գյուղի շուրջ ստեղծված իրավիճակը եթե հանգուցալուծում չստանա, բնակիչները կլքեն գյուղը, քանի որ հիմնականում անասնապահությամբ են զբաղվում, իսկ հիմա չեն կարող զբաղվել ընդհանրապես:

«Եթե այստեղ ապրող բնակչին այսպես անտեսում են, պարզ չի, որ բնակիչ չի մնալու: Գյուղում դպրոցը, տները նշանառության տակ են, ամեն առավոտ հելնում ենք, իրանց ենք տեսնում, մինչեւ ուշ գիշեր իրանց լույսերը տեսնում ենք, ու այդպես վախվիսելով ապրում ենք, Աստծուն զգած ապրում ենք, ում ինչ վեջնա, էնքան որ սահմանը այստեղ պահենք: Էդ 5 ընտանիքը եթե դուրս գան գյուղից, մնացածն էլ կգնան: Եթե այսպես շարունակվի, գյուղը հաստատ, 100 տոկոսով կդատարկվի», - ասաց նա:

Հիշեցնենք, որ մայիսի 12-ից թշնամին խախտելով հայ-ադրբեջանական սահմանը՝ Սյունիքի և Գեղարքունիքի հատվածներում մի քանի կիլոմետր առաջ է եկել՝ պատճառաբանելով, թե իր տարածքներն է, հետևաբար՝ չի հեռանալու: Գեղարքունիքի մարզում թշնամին առաջ է եկել Կուլթ, Ազատ, Նորաբակ և Վերին Շորժա գյուղերի ուղղությամբ:

<https://news.am/arm/news/654281.html>

17.07.2021

Հուլիսի 15-ին Ադրբեջանական զինձառայողները Գեղարքունիքի մարզի Կուլթ գյուղի հատվածում հրաձգություն են սկսել. ՄԻՊ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կուլթ գյուղի հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերի 2021 թվականի հուլիսի 15-ի կրակոցները ապացույց են, որ ինքնին նրանց ներկայությունը ՀՀ սահմանային գյուղերի հարևանությամբ և ճանապարհներին ՀՀ բնակիչների կյանքի իրավունքի խախտում է: Այս մասին հայտարարություն է տարածել ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանը:

«Հուլիսի 15-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացել է ահազանգեր, որ ադրբեջանական զինձառայողները Գեղարքունիքի մարզի Կուլթ գյուղի հատվածում հրաձգություն են սկսել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքներով պարզվել է, որ կրակոցները լսելի են եղել նաև Կուլթ գյուղում՝ քաղաքացիական բնակչության համար:

Ահազանգերի հիման վրա պարզվել է, որ Կուլթ գյուղի հարակից տարածքում՝ մոտ 3 կմ հեռավորությամբ տեղակայված են ադրբեջանական զինված ուժեր, որոնք գտնվում են ՀՀ ինքնիշխան տարածքում:

Դրանք վայրեր են, որոնք քաղաքացիական բնակչության համար ծառայում են՝ որպես արտավայրեր և խոտհարքեր: Ադրբեջանական անօրինական ներկայության պատճառով ՀՀ բնակիչները զրկվել են իրենց այդ իրավունքներից:

Փաստահավաք աշխատանքները պարզել են նաև, որ հուլիսի 15-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում ադրբեջանական զինված ուժերը տարբեր տրամաչափի զենքերից մոտ 40 րոպե տևողությամբ, ինտենսիվ կրակել են հայկական զինված ուժերի դիրքերի ուղղությամբ:

Գեղարքունիքի մարզի գյուղերի հարևանությամբ ադրբեջանական զինծառայողների այս պարբերական դարձած կրակոցներն իրական վտանգ են ՀՀ քաղաքացիական բնակչության կյանքի ու առողջությամբ համար: Այդ արարքներն ուղղված են նաև ՀՀ բնակիչներին սեփականության և այլ կենսական իրավունքներից, անասնապահությամբ զբաղվելու և ընտանիքի եկամուտը վաստակելու հնարավորությունից զրկելուն:

Նրանք նույնատիպ հանցավոր արարքներ (կրակոցներ, կենդանիների գողություններ, խոտքաղ իրականացնելու խոչընդոտներ և այլն) պարբերաբար կատարում են թե՛ Գեղարքունիքի, թե՛ Սյունիքի համայնքների հարևանությամբ կամ բնակիչների նկատմամբ:

2021թ. հուլիսի 15-ի կրակոցները ևս մեկ անգամ ապացուցում են, որ ադրբեջանական զինված ուժերի ներկայությունը ՀՀ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի գյուղերի հարևանությամբ, Սյունիքի մարզի համայնքների միջև ճանապարհներին առաջնահերթ ՀՀ բնակիչների կյանքի իրավունքի խախտում է:

Հուլիսի 15-ին ադրբեջանական կրակոցների փաստը Գեղարքունիքի մարզում պաշտոնապես հաստատել է նաև ՀՀ պաշտպանության նախարարությունը»:

<https://news.am/arm/news/654200.html>

16.07.2021

Գեղարքունիքում անորոշ, լարված վիճակ է սահմանապահներ են տեղափոխվում՝ ընտանիքներով. Գեղամասարի համայնքապետ

Ռուս սահմանապահներն իրենց ընտանիքներով տեղակայվելու են Սոթքում, տարածքի խնդիր կար, կարգավորվեց: Ժամանակավոր կացարաններ կսարքվեն, ռուս սահմանապահների՝ այնտեղ ապրելու հանգամանքը տեղի բնակիչների բնակության վրա չի ազդելու. Yerkir.am-ի հետ զրույցում ասաց Գեղարքունիքի մարզի Գեղամասար խոշորացված համայնքի ղեկավար Հակոբ Ավետյանը:

Խոսելով սահմանային իրավիճակի մասին՝ Ավետյանն ասաց, որ լարված վիճակ է, դեռ չգիտեն, թե ինչ է լինելու: «Սոթքում արդեն ռուս սահմանապահներ կան, որոշ մասն արդեն եկել է: Այն փուլում ենք, երբ դեռ պիտի որոշվի՝ ինչ է լինելու, կամ էլ արդեն որոշված է, ես տեղյակ չեմ: Հրաձգություն, ճիշտ է, շատ չի լինում, բայց սահմանին լարվածությունը պահպանվում է», - նշեց նա:

Ավետյանից հետաքրքրվեցինք՝ պատկան մարմիններին, կառավարության անդամներին, մարզպետ Գնել Սանոսյանին հարցրել են՝ ե՞րբ են, ի վերջո, ադրբեջանցիները հեռանալու Գեղարքունիքի մարզից, պատասխանեց. «Ես այդ հույսը չունեմ»:

Դիտարկմանը՝ փաշինյանամերձ անձինք պնդում էին, որ թշնամու ներխուժումը Հայաստանի սուվերեն տարածքներ պայմանավորված է ընտրություններով, ընտրությունների ավարտից հետո կհեռանան, Ավետյանն արձագանքեց. «Ես շատ ուրախ կլինեի, որ այդպես լիներ, բայց նման հույս չունեմ: Լարված իրավիճակ է, չգիտենք, թե ամեն րոպե ինչ կարող է լինել: Բնակիչներն էլ վախի մեջ են, տազնապր կա, եթե թուրքը մոտ է, նստած է սարերում, ո՞նց չտազնապեն», - հավելեց նա:

Հիշեցնենք, որ մայիսի 12-ից ադրբեջանական զորքը ներխուժել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզեր, տեղակայվել բարձրադիր գոտիներում, զավթել բնակիչների

արոտավայրերը, գյուղատնտեսական նշանակության մշակահողերը եւ չի հեռանում: Ավելին՝ ոտքը պնդելու համար թշնամին մեր հողերի վրա շինաշխատանքներ է իրականացնում:

Լիանա Սարգսյան, <http://yerkir.am/news/view/244317.html>

14.07.2021

ՄԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, երեկ անդրադառնալով սահմանային միջադեպերին եւ ադրբեջանական կողմի գործողություններին, ասաց, որ յուրաքանչյուր միջադեպի առնչությամբ կարելու է, որպեսզի քրեական գործեր հարուցվեն: Պաշտպանն ասուլիս էր հրավիրել՝ ներկայացնելու կառավարության թերացումները սահմանային բնակիչների խախտված իրավունքների պաշտպանության հարցում: «Քրեական գործեր հարուցելով՝ մենք ապացույցներ ենք ապահովում, որպեսզի հետագայում պաշտպանենք մեր քաղաքացիներին միջազգային ասպարեզներում, որովհետեւ Մարդու իրավունքների պաշտպանի ձեռք բերած ապացույցն այլ բան է, քրեական գործով հարուցված ապացույցները՝ այլ՝ միջազգային աստիճանների համար», - ասաց Արման Թաթոյանը:

Նրա համոզմամբ՝ նման լարված պայմաններում սահմանների դեղին գիծը եւ դեմարկացիա (սահմանագծում եւ սահմանագատում) չի կարելի անել. «Իմ կարծիքով՝ այս պայմաններում սահմանային դեղին գիծը եւ դեմարկացիայի գործընթաց չի կարող տեղի ունենալ: Դա, նախ, խախտումները կլեգիտիմացնի, երկրորդ՝ կարող է նույնիսկ ավելի մեծ լարվածություն բերել բնակիչների իրավունքների պաշտպանության առումով, որոնք շարունակում են մնալ խախտված»: Ըստ պաշտպանի՝ եթե, այնուամենայնիվ, սկսվի այդ գործընթացը, դա պետք է տեղի ունենա հայկական տարածքներից ադրբեջանցի զինվորականների հեռացմանը զուգահեռ: Ադրբեջանական զինվորականների ներկայությունը խախտում է սահմանային բնակիչների կյանքի, ջրի, ազատ տեղաշարժվելու իրավունքները: Ունենք պաշտոնյաներ, որոնք իրենց հայտարարություններով պարզապես նվերներ են մատուցում ադրբեջանական իշխանություններին: Պաշտպանի խոսքով, ճիշտ դեղին գիծը եւ դեմարկացիան մարդու իրավունքների պաշտպանության կարեւորագույն երաշխիք է. «Չնայած այսօր մարդիկ ունեն օրինական փաստաթղթեր իրենց իրավունքներով, բայց զրկված են դրանք օգտագործելու հնարավորություններից: Հիմա եթե մենք ադրբեջանցիների չհեռանալու պայմաններով ենք դա կատարում, խնդիր է առաջանում»: Նա նաեւ ասաց, որ Ադրբեջանի իշխանությունները շարունակում են հովանավորել հայաստանի կառավարությունը, թշնամանքը մեր ժողովրդի նկատմամբ. «Անգամ ես միջազգային կառույցներին ցույց եմ տվել, որ դա ֆաշիզմի հասնող թշնամանք է»:

«Ադրբեջանական զինծառայողները 5 տարուց ավելի է՝ փոխել են Մեդրի գետի Չվարագետ վտակի հունը, այն այլեւս չի միախառնվում գետին», - ասուլիսի ժամանակ այս մասին հայտարարեց Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

«Ադրբեջանցիները հատուկ փոխել են հունը Չվարագետ վտակի, այն այլեւս չի միանում Մեդրի գետին, այդ իսկ պատճառով, օգոստոսից սկսած, Նոնաձոր, Շվանիձոր, Ալվանք գյուղերում լրջագույն խնդիրներ են առաջանում՝ կապված խմելու եւ ոռոգման ջրի հասանելիության հետ», - հայտարարեց Թաթոյանը:

ՄԻՊ-ը հավելեց, որ Հայաստանը ՄԱԿ-ում, ԵԽ-ում եւ այլ միջազգային կառույցներում այդ հարցերը բարձրացնելու լայն հնարավորություններ ունի:

Մյուս հարցը, որ ջրի հասանելիության խնդիր է, Արման Թաթոյանի խոսքերով, Մե լճի հատվածն է, ուր ներխուժել են ադրբեջանական զինված ուժերը ու իրենց հանցավոր ներկայությամբ խախտում են Հայաստանի քաղաքացիների իրավունքները:

«Այդ ջրային պաշարները նրանց վերահսկողության ներքո են», - ասաց Թաթոյանը՝ հավելելով, որ այս հարցերը Հայաստանը ՄԱԿ-ում, ԵՄ-ում եւ այլ միջազգային հարթակներում ներկայացնելու հնարավորություններ ունի:

Թաթոյանի խոսքերով՝ Գեղարքունիքի մարզում կան ջրային ավազաններ, որոնք այս պահին գտնվում են ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության ներքո:

Ն.Հ.

<https://armlur.am/1121137/>

07.07.2021

Մարզպետ. Գեղարքունիքի մարզում 2020 թվականին 120 կմ ճանապարհներից վերանորոգվել է ընդամենը 99 կմ-ն

Անցյալ տարի Հայաստանի Գեղարքունիքի մարզում նախատեսվում էր իրականացնել ընդհանուր 120 կմ ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ: Այս մասին հուլիսի 7-ին կայացած մամուլի ասուլիսին ասաց Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը:

Այնուամենայնիվ, ըստ մարզպետի, իրենց հաջողվել է ասֆալտապատել ընդամենը 99 կմ-ն: «Որոշակի աշխատանքներ կատարվել են 20 կմ ճանապարհների վրա, իսկ մնացած հատվածներում աշխատանքները շարունակվում են», - ասաց Սանոսյանը:

Ընդ որում, ինչպես նշեց մարզպետը, եթե նախորդ տարի կառավարության կողմից հատկացված միջոցների հաշվին վերականգնվել եւ կառուցվել էր 62 կմ ճանապարհ, իսկ մնացածը՝ սուբսիդիայի հաշվին, ապա այս տարի պետությունը ֆինանսավորել է ընդամենը 39 կմ ճանապարհների վերականգնումը:

<https://news.am/arm/news/652556.html>

07.07.2021

Մեծ Մասրիկում կարտադրվի 53 մվտ/ժ էլեկտրաէներգիա. Գեղարքունիքի մարզպետ

Այլընտրանքային էլեկտրաէներգիայի արտադրությունը մեր տարածաշրջանի զարգացման առաջնահերթ ուղղություններից է, եւ մենք հետեւողականորեն առաջ ենք տանում այդ քաղաքականությունը: Այս մասին հուլիսի 7-ի մամուլի ասուլիսում ասաց Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը:

Նա, մասնավորապես, ներկայացրեց մարզում արտադրվող այլընտրանքային էներգիայի ծավալները, ինչպես նաեւ դրա զարգացման հեռանկարները: «Ներկա պահին այլընտրանքային էներգիայի արտադրության համար մենք փոխել ենք 387 հա հողերի կատեգորիան, եւ դրանցից 36

հա-ի վրա արդեն շինարարություն է կատարվում: Շինաշխատանքները սկսվում են Մեծ Մասրիկում՝ 132 հեկտարի վրա: Շինաշխատանքների ավարտից հետո «Մեծ Մասրիկ» արեւային ֆոտովոլտային կայանում կարտադրվի 53 մեգավատ/ժամ էլեկտրաէներգիա: Ներկա պահին 16 մվտ էլեկտրաէներգիա արտադրվում է խոշորացված Շողակաթ համայնքի կայաններում, որոնք կառուցվել են վերջին երեք տարում», - տեղեկացրել է մարզպետը:

Ընդ որում՝ նա նշել է, որ մյուս կայանների շինարարության ավարտից հետո Շողակաթի արեւային կայաններն ընդհանուր առմամբ կարտադրեն 36 մվտ էլեկտրաէներգիա:

Սանոսյանի խոսքով՝ ներդրումները «Շողակաթ» արեւային կայանի շինարարությունում կազմել են մոտ 15 մլրդ դրամ: «Շինարարության ընթացքում ստեղծվել է մոտ 700 աշխատատեղ, իսկ յուրաքանչյուր կայանի աշխատանքի դեպքում կստեղծվի մինչեւ 10 աշխատատեղ», - եզրափակել է մարզպետը:

<https://news.am/arm/news/652533.html>

07.07.2021

Մարզպետ. Գեղարքունիքում արոտավայրերի օգտագործման հետ կապված խնդիրներ են առաջացել

44-օրյա պատերազմից հետո արոտավայրերի օգտագործման հետ կապված խնդիրներ են առաջացել: Այս մասին ապօր՝ հուլիսի 7-ին, մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը:

Նրա խոսքով՝ կան հատվածներ, որտեղ արոտավայրերի օգտագործման հետ կապված որոշ խնդիրներ են առաջացել, հատկապես՝ մայիսի 13-ից հետո, այսինքն՝ ՀՀ տարածք թշնամու ներխուժման պահից:

«Սակայն կան հատվածներ, որտեղ բանակային կորպուսը բնակչությանն աջակցում է», - ասաց Սանոսյանը:

<https://news.am/arm/news/652552.html>

06.07.2021

Ոչ միայն մեր գյուղացին, այլև ամբողջ Երեւանն է Ադրբեջանի թիրախում. Վերին Շորժայի վարչական ղեկավար

Առողջ մտածողները գիտեն, որ վտանգը միայն Վերին Շորժային չի առնչվում, վտանգն ամբողջ Հայաստանի մակարդակով է: Ադրբեջանցիները բարձր սարն անցել են, այնտեղից մեր Սեւանա լիճը նրանց ոտքերի տակ է, ցանկացած բոլակ կարող են կրակել ու սադրանք հրահրել. **Yerkir.am**-ի հետ զրույցում ասաց Վերին Շորժա համայնքի վարչական ղեկավար Արտյոմ Երանոսյանը

Ժողովրդի աչքերին թոզ փչելու, ձայներ կորզելու համար մինչեւ ընտրությունները իշխանամետ շրջանակները պնդում էին, թե գերիների վերադարձը, ադրբեջանցիների՝ Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզերում հայտնվելը, Հայաստանի տարածքները զավթելը ընդդիմության ձեռքի գործն

է, եւ որ թշնամին հետ կքաշվի, երբ Փաշինյանը վերընտրվի: Ընտրություններից 17 օր է անցել, ե՛ւ Գեղարքունիքի, ե՛ւ Սյունիքի մարզում իրավիճակը շարունակում է լարված մնալ: Ադրբեջանական զորքը ոչ միայն չի հեռանում Հայաստանից, այլև ոտքը ամրապնդել՝ շինարարական աշխատանքներ է կատարում: Ասվածը փաստում է նաև Վերին Շորժայի վարչական ղեկավարը:

«Ադրբեջանցիները եկել էին ընտրությա՞ն, որ ասում էին՝ ընտրություններից հետո կլքեն Գեղարքունիքի մարզի դիրքերը, հա՞: Չեմ կարծում, որ նրանք հետ կգնան, եթե եկել ու այդքան աշխատանքներ են կատարում», - ասաց Երանոսյանը՝ ընդգծելով՝ Գեղարքունիքի մարզի բնակիչների ինքնագիտակցությունը շատ ցածր է: «Թշնամին եկել, զավթել է մեր հողը, նորմալ մարդը բա չի՞ մտածում, որ թշնամին է իրենց դեմը, այն թշնամին, որն ընդունակ է ամեն ինչի», - նշեց մեր զրուցակիցը:

Երանոսյանը քաղաքական հարցերին հրաժարվեց պատասխանել, օրինակ՝ թե ի՞նչ սպասելիքներ ունի նորընտիր կառավարությունից: «Ես քաղաքականությամբ չեմ զբաղվել, սիրտս խառնում է լսելուց: Գլուխս կախ՝ իմ աշխատանքն եմ կատարում, պատրաստվում ենք ցորենացանի: Հիմա թե ով ինչ է ասում, ինչ է մտածում, Աստված իրենց հետ: Իմ գործն ավելի հզոր է, քան մնացածի, ես իմ աշխատանքով թուրքին ցույց եմ տալիս՝ հայը չի վախենում ձեզանից: Իրենք բարձր սարի վրա են նստած, մենք հարթավայրային հատվածում ցանքս ենք կատարում, մեզանից հեռու են մոտ 500 մետր եւ ցանկացած ժամանակ կարող են կրակել, սադրանք հրահրել», - նշեց Վերին Շորժայի վարչական ղեկավարը:

Հիշեցնենք, որ այսօր Գեղարքունիքի Վերին Շորժա գյուղի սահմանային հատվածում Ադրբեջանը փոխհրաձգություն է հրահրել: Արդյունքում՝ հայկական կողմն ունի մեկ, ադրբեջանցիները՝ երկու վիրավոր զինծառայող: Լուրը լրատվամիջոցների հետ զրույցում հաստատել է ԶՈւ գլխավոր շտաբի վարչական ապարատի տեղեկատվական բաժնի պետ, գնդապետ Սամվել Ասատրյանը:

Լիանա Մարգարյան

<http://yerkir.am/news/view/243424.html>

04.07.2021

Կենդանիների մոտ սիրիայան խոցի նոր դեպքեր չկան. ՀՀ ամենամեծ անասնաշուկան վերահսկվում է

Մարտունու տարածաշրջանում գտնվող երկրի ամենամեծ անասնաշուկայում սիրիայան խոցով հիվանդ կենդանիներ չեն հայտնաբերվել: Տեղեկությունը հայտնում է ՄՍՏՄ-ն: Ֆեյսբուքյան էջում հրապարակված զրառման համաձայն՝ հուլիսի 4-ի առավոտյան սննդամթերքի անվտանգության Գեղարքունիքի մարզային կենտրոնի տեսուչները շրջայց են կատարել անասնաշուկայում:

«Հատկապես ուշադրություն է դարձվել, որ բացառվի անասնաշուկա կենդանիների մուտքը Գեղարքունիքի մարզի Վանևան և Տորֆավան գյուղերից, որտեղ վերջերս կենդանիների մոտ սիրիայան էր հայտնաբերվել», - նշված է հաղորդագրության մեջ:

Նշվում է նաև, որ Մարտունու անասնաշուկան ՄՍՏՄ հսկողության տակ է:

Հավելենք, որ օրեր առաջ Գեղարքունիքի մարզի Վանևան և Տորֆավան համայնքների 3 բնակչի մոտ սիրիայան խոց էր ախտորոշվել:

Նախնական կասկածներով՝ վարակը տարածվել է հիվանդ անասունի մսից: Ի դեպ, անկաճ անասունին բնակիչները մորթել ու վաճառել են գյուղում՝ չկասկածելով, որ սիբիրյան խոց է, այդ իսկ պատճառով տուժածների մեջ եղել են ինչպես մորթը կատարած, այնպես էլ միսը գնած գյուղաբնակներ:

<http://yerkir.am/news/view/243254.html>

02.07.2021

Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, ընդհանուր առմամբ, հաստատվել է սիբիրյան խոցի 8 դեպք. հիվանդները հոսպիտալացված են

Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի Իսահակյան գյուղում կենդանիների շրջանում սիբիրյան խոցի հայտնաբերված դեպքերի առնչությամբ՝ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կողմից կատարվել է նմուշառում այդ բնակավայրի 7 բնակչից: Նրանցից 5-ի մոտ հաստատվել է «սիբիրյան խոց» ախտորոշումը: Այս մասին համապատասխան հայտարարությամբ մանրամասնում է ՀՀ Առողջապահության նախարարությունը: Ըստ այդ տեքստի՝ հիվանդները հոսպիտալացված են Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոցում, նրանց վիճակը գնահատվում է միջին ծանրության և թեթև:

Այսպիսով, հուլիսի 2-ի դրությամբ Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, ընդհանուր առմամբ, հաստատվել է սիբիրյան խոցի 8 դեպք: Հիվանդները հոսպիտալացված են Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոցում և Մարտունու բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքում: Նրանց վիճակը գնահատվում է միջին ծանրության և թեթև, վերջիններս ստանում են անհրաժեշտ բուժում:

<http://yerkir.am/news/view/243164.html>

02.07.2021

Հիմնովին վերակառուցվում է Գեղհովիտի դպրոցը

Վերակառուցվում է Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի թիվ 2 հիմնական դպրոցը: Շենքը կառուցվել է նախորդ դարի հիսունական թվականներին և գտնվում էր ծայրահեղ վթարային վիճակում: Դասապրոցեսի իրականացումն այս պայմաններում տարեցտարի դառնում էր առավել վտանգավոր: Խարխլվել էին կառույցի հիմքերը, տասնամյակներ շարունակ չէին իրականացվել վերանորոգման աշխատանքներ, ինչի հետևանքով դասասենյակների հատակը, պատերն ամբողջությամբ շարքից դուրս էին եկել: Միակ լուծումը շենքի քանդումն ու նոր դպրոցի կառուցումն էր:

ՏԿԵՆ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով իրականացվող՝ Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում, ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի՝ 1 միլիարդ 411 միլիոն դրամ ներդրմամբ արդեն սկսվել են դպրոցի նոր շենքի վերակառուցման աշխատանքները:

Արդեն քանդվել է հին շենքը, այժմ իրականացվում են հողային աշխատանքներ:

Նորակառույց դպրոցը կձառայի շուրջ 600 աշակերտի, կունենա ժամանակակից դասասենյակներ, հարմարավետ սպորտդահլիճ, հանդիսությունների սրահ, վերելակ, լիարժեք հարմարեցված կլինի ներառական կրթության համար:

ՀՏԶՀ լրատվական հոսքերի ծառայություն, <http://yerkir.am/news/view/243126.html>

01.07.2021

Ես այդ թիվը ձեզ չեմ ասի. Գնել Սանոսյանը՝ Գեղարքունիքի մարզում գտնվող աղբբեջանցիների մասին

Ես այդ թիվը ձեզ չեմ ասի, ի՞նչ կարիք կա այդ թիվը հայտարարել: Այս մասին այսօր՝ հուլիսի 1-ին, լրագրողներ հետ զրույցում ասաց Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը՝ անդրադառնալով այն հարցին, թե քանի աղբբեջանցի է այս պահին գտնվում Գեղարքունիքի մարզում:

Նա հավելեց, որ այդ հարցով ինքը չի զբաղվում, կան համապատասխան մարմիններ, որոնք այդ ինֆորմացիան կարող են տալ:

Դիտարկմանը, որ խոսվում է 1000 աղբբեջանցիների մասին՝ Սանոսյանը նշեց. «Իսկ որտե՞ղ եք տեսել, որ այդ թիվը կարիք կա հրապարակելու: մենք ունենք մարմիններ, որոնք զբաղվում են, գիտեն որտեղ ինչ ունենք: Մամուլում ինչ ասես հրապարակվում է»:

Հարցին, թե երբ է սկսվելու ռուսական խաղաղապահ ուժերի տեղակայման գործընթացը Գեղարքունիքի մարզում, Սանոսյանը պատասխանեց. «Ընթացքի մեջ է, օրը չեմ կարող ասել»:

<https://news.am/arm/news/651655.html>